

Հորիզոն

Ապրիլ 2026 / APRIL 2026 / AVRIL 2026

horizon



ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 111-ԱՄԵԱԿԻ ԲԱՑԱՌԻԿ
111th ANNIVERSARY OF THE ARMENIAN GENOCIDE
111ème ANNIVERSAIRE DU GÉNOCIDE ARMÉNIEN

Grocery Store | Bakery | Butchery | Café | Catering



NOW OPEN

**Mississauga
720 Bristol Road West,
ON, L5R 4A5
(905) 502 9292**



**Scarborough
1909 Lawrence Ave East
ON, M1R 2Y6
(416) 755-5084**



Scan Here To Check Out
Our Weekly Flyer At
www.arzfinefoods.com



Scan Here for Our
Catering Book At
www.arzfinefoods.com

For The Latest News And Deals Follow Us At:

www.arzfinefoods.com @arzfinefoods



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ցաւերժական Հայաստանի ուխտը՝ ընդդէմ ուրացման եւ իրականութեան կեղծիքին

Ապրիլեան այս սրբազան նախաշնամբին, երբ Հայոց Յեղասպանութեան 111-րդ տարելիցը կը դիմաւորենք մեր արդի պատմութեան ամենաճակատագրական ու մութ հորիզոններուն առջեւ, հայ միտքն ու հոգին կը գտնուին գոյաբանական աստուծոյ անդուր դէմ յանդիման:

Այսօր, Երեւանի վարչախումբին կողմէ հետեւողականօրէն հրամցող «իրական Հայաստան»-ի նորայայտ ու սին աճալարութիւնը կը փորձէ մեզ համոզել, թէ մեր արդար դատն ու պատմական յիշողութիւնը լոկ «բեռ» են, զորս պէտք է փութով թօթափել՝ յանուն անորոշ, նուաստացուցիչ ու վաղանցիկ «խաղաղութեան» մը: Սակայն, իբրեւ Յեղասպանութեան արհաւիրքէն ճողոպրած սերունդներու ժառանգորդներ, մեր բարոյական պարտքն է ասպանել եւ բարձրաձայնել, որ այսպիսի մօտեցում ոչ թէ իրապաշտ դիւանագիտութիւն է, այլ բացայայտ ուրացում եւ հոգեւոր անձնատուութիւն: Հայ Դատի հետապնդումը եւ պահանջատիրութեան օրակարգը որպէս «ծուղակ» կամ «կարծրատիպ» որակելը ինքնին դաւաճանութիւն է մեր նահատակներու անթաղ ոսկորներուն եւ մեր ազգային ինքնութեան ամէնէն տարրական հասկացողութեան նկատմամբ:

Պետական մակարդակով քարոզող այս համակերպումը կը միտի արժեզրկել մեր հաւաքական յիշողութիւնը, գայն ներկայացնելով իբրեւ խոչընդոտ՝ պետականաշինութեան ճանապարհին: Մեզի կը թելադրուի, թէ պէտք է հրաժարինք արդարութեան համազգային պահանջէն՝ իբր թէ ներկայ պետութեան ֆիզիքական անվտանգութիւնը ապահովելու համար:

Սակայն, պատմութեան դաժան դասերը մեզի սորվեցուցած են ու կը շարունակեն սորվեցնել, թէ առանց արդարութեան եւ առանց անխաթար յիշողութեան պահպանման, որեւէ պետական միաւոր պարզապէս աշխարհագրական լքուած պարապութիւն մըն է, զուրկ՝ կենսատու հոգիէ եւ ազգային դիմագիծէ:

Եթէ այսօր ծուկի դանք թշնամիին առջեւ եւ «ձերբազատուինք» մեր իրաւունքներու հետապնդումէն, մենք մեր իսկ ձեռքով պիտի ամբողջացնենք 1915-ի ոճրագործներուն կիսատ ձգած հայաջնջման ծրագիրը: Յիշողութեան կամաւոր կորուստը հաւասարագործ է ինքնակամ իրաւագրկման, իսկ սեփական դատէն հրաժարող ազգը դատապարտուած է դառնալու պատմութեան լուսանցքի փոշի:

Այս օրհասական պահուն, երբ Մայր Հայրենիքի սահմանները կը տատանին, եւ անոր դեկը ստանձնած միտքը կը գտնուի հոգեբանական ու գաղափարական գահավիժումի մէջ, Սփիւռքը կոչուած է ըլլալու հայութեան գոյապայքարի ամուր եւ աննկուն առաջնագիծը: Սփիւռքը պարզապէս օժանդակող ուժ կամ հեռակայ դիտորդ է, այլ հայկական քաղաքակրթութեան այն զարկերակն է, որ կը սնանի արդարութեան տենչով եւ հայրենագրկման ցաւով: Մենք չենք կրնար եւ իրաւունք

չունինք թոյլ տալու, որ պահի մը տկարութիւնը, ներքին պառակտումը կամ պաշտօնական Երեւանի որդեգրած կարճատեսութիւնը ջնջէ մէկուկէս դարու մեր արիւնալի պայքարն ու ձեռքբերումները: Արցախի դաժան կորուստը, հոն իրականացուած բռնի հայաթափումն ու մշակութային եղեռնը վառ ապացոյցներն են այն դառն իրողութեան, որ թշնամիին ախորժակը երբեք չի յագենար միակողմանի գիշումներով, այլ ընդհակառակը:

Ուստի, Սփիւռքը այսօր պէտք է վերստանձնէ իր պատմական առաքելութիւնը՝ իբրեւ հայ ազգի յաւերժական արժէքներուն, անսակարկելի իրաւունքներուն եւ Արցախի վերականգնելի դատին անդաւաճան ու միակ կայուն պահպանը: Երբ հայրենի պետականութեան հիմքերը կը խարխիւն ներքին նահանջողականութեան պատճառով, Սփիւռքի քաղաքական ու մտաւորական ներուժը պէտք է հանդիսանայ այն այլընտրանքային բերդը, որ թոյլ չի տար ազգային իտէալներու վերջնական մաշումին: Մենք պէտք է ըլլանք այն ձայնը, որ միջազգային բեմերուն վրայ կը հնչեցնէ հայու անժամանցելի իրաւունքը, մերժելով ամէն տեսակի «գործնական» պատրուակ, որ կը միտի «սրբազրել» պատմութիւնը ի նպաստ ոճրագործին:

Հայոց Յեղասպանութեան 111-րդ տարելիցը սովորական սգատօն կամ օրացուցային արարողութիւն չէ, այլ մեր կամքի վերանորոգման եւ անգիշող պայքարի նոր ուխտագրում մը: Մենք պէտք է աշխարհին եւ, նախեւառաջ, մեր ներքին յոգնածներուն ու ինքնակոչ «իրապաշտներուն» յայտարարենք յստակօրէն՝ հայ ազգը չի սահմանափակուիր միայն այսօրուան վարչական նեղ քարտէսով կամ ժամանակաւոր իշխանութեան մը կամակատարութեամբ: Մեր ինքնութիւնը կը խարխուլի հազարամեակներու վրայ երկարող հաւաքական կամքի եւ բացարձակ արդարութեան տեսլականին վրայ, որուն դիմաց ցանկացած գիշողականութիւն ժամանակաւոր ստուեր է:

Պետականութիւնը առանց համազգային իտէալի՝ լոկ մարմին է առանց ողնաշարի, որ դատապարտուած է փլուզման առաջին իսկ փոթորիկին: Մեր ուժը մեր անգիշողականութեան եւ մեր հաւաքական յիշողութեան մէջ է, որոնք կը կազմեն մեր ազգային յարութեան երաշխիքը: Մենք կը մերժենք «Իրական Հայաստանի» պարտուողական ու նեղմիտ կաղապարը, որովհետեւ մեր հաւատամքը յաւերժական Հայաստանն է՝ իր ամբողջական իրաւունքներով, արեւմտահայաստանի ու Արցախի կորուսեալ ժառանգութեամբ եւ ազգային անխախտ արժանապատուութեամբ:

Այս պայքարը պիտի շարունակուի այնքան ատեն, քանի դեռ հայկական արդարութեան արեւը չէ ծագած մեր բովանդակ հայրենիքին վրայ, եւ քանի դեռ աշխարհասփիւռ հայութիւնը կը շնչէ իբրեւ մէկ միասնական, պահանջատէր եւ աննկուն ամբողջութիւն:

Բովանդակություն - Table of contents

Ռվ այսօր կը յիշէ Արցախը <i>Խ. Տէր Ղուկասեան</i>	էջ 3
«Քանի դեռ ինչպէս հարկն է չի դատապարտուել Հայոց ցեղասպանութիւնը, մարդկութիւնը կը շարունակի կանգնել նորանոր ցեղասպանութիւնների վտանգին դէմ յանդիման» Թուրքագէտ Մելինէ Անումեան.....	էջ 7
<i>Յասմիկ Պալէեան</i>	
Հայոց ցեղասպանութեան պահանջատիրութիւնն ու նոր զարգացումները <i>Գէորգ Ղուկասեան</i>	էջ 9
Միշտ այդ յոյսով <i>Վրէժ-Արմէն</i>	էջ 12
Հ.Յ.Դաշնակցութեան կողմէ Ռոստոմի ներկայացուցած Յուշագիրը Ստոկհոլմի Ընկերվար Միջազգայնական Համագումարին (1917).....	էջ 14
The role of the Tehcir Law and legal mimicry in the Armenian Genocide <i>Sevag Belian</i>	էջ 25
Կողմի նկարը՝ «Հորիզոն»-ի	



Յուշ՝ Օթթաուսի Թրքական դեսպանատան դիմաց (2025)

Ո՞վ այսօր կը յիշէ Արցախը...

... Երբ ցեղասպանութիւնը կը վերադառնայ աշխարհաքաղաքականութիւն

Խ. Տէր Ղուկասեան

«Դեռ ինչքա՞ն պիտի փորձէք սիրաշահիլ գազանը (Ալիբեյը), երբ ան ամէն օր նորանոր պահանջներ կը ներկայացնէ եւ կը շարունակէ իր թշնամական հետորոբանութիւնը: Ինչքա՞ն պիտի շարունակուի այս սիրաշահելու քաղաքականութիւնը: Մենք կը տեսնենք, որ դուք կը փորձէք սիրաշահիլ գազանը, բայց գազանը չի կշտանար, գազանը աւելին կ'ուզէ: Ո՞ւր է այս ամէնուն սահմանը»

Սեւան Տէյրմենճեանի հարցումը Նիկոլ Փաշինեանին, 26 Սեպտեմբեր 2024-ին

Պաղ պատերազմի աւարտին, միջազգային յարաբերութիւններու մէջ ցեղասպանութեան կանխարգելման մեքանիզմներու ստեղծման շուրջ արձանագրուած զգալի յառաջընթացն էր, ցեղասպանութիւնը վերադարձած է աշխարհաքաղաքականութեան:

Միացեալ ազգերու կազմակերպութեան (ՄԱԿ) 1948-ի Գեղասպանութեան յանցագործութեան կանխարգելման եւ պատժման մասին համաձայնագրէն յետոյ տարի ետք, Հոռմի համաձայնագրով Միջազգային քրէական տեսանի (ICC) ստեղծումը, ինչպէս նաեւ ՄԱԿ-ի 2005-ի Ընդհանուր ժողովին կողմէ որդեգրուած Պաշտպանելու պատասխանատուութեան (R2P) նորմը, այդ յառաջընթացին ամենացայտուն երեսներն են: Անկախ իրենց գործնականացման ընթացքին երեւան եկած բոլոր հակասութիւններէն եւ այն մեծ հարցականէն, թէ արդեօ՞ք յաջողած են զանգուածային ոճիրներու կանխարգելման իրենց նպատակին հասած ըլլալու մասին համոզիչ փաստեր ներկայացնել:

Որքան ալ սահմանափակ ըլլայ միջազգային յարաբերութիւններու տինամիքին մէջ ուժի կիրառումը նուազեցնելու անոր կարողութիւնը, միջազգային օրէնքը, այնուամենայնիւ, կը պահպանէ իր նուազագոյն պիտանիութիւնը: Աւելի լաւ է ունենալ թէկուզ եւ թերի կանոնաւորումներու առկայութեամբ ընկալուած աշխարհակարգ մը, քան բնականոնացնել «ուժեղները կ'ընեն այն ինչ կրնան, տկարները կ'ընդունին այն ինչ պարտաւոր են» Թուկիդիդեսեան (Thucydides) ծանօթ տողը Պելոպոնեսեան Պատերազմը հատորի Մելիոսեան Երկխօսութիւնը (The Melian Dialogue) գլխուն մէջ:

Յետ-պաղպատերազմեան յարաբերաբար խաղաղ ժամանակաշրջանէն ետք, պատերազմներու վերադարձը միջազգային քաղաքական բեմահարթակ զգալի էր արդէն քսանմէկերորդ դարու սկիզբէն՝ «Ահաբեկչութեան դէմ պատերազմ»-ի հաստատագրումով որպէս տիրապետող օրակարգային կէտ: Բայց յատկապէս 2020-էն ի վեր է, որ միջազգային օրէնքի արագընթաց արժեզրկումով պատերազմները վերածուած են տազնապներ լուծելու ոչ թէ վերջին, այլ առաջին այլընտրանքի՝ հեռու «այլ միջոցներով քաղաքականութեան շարունակութիւն» ըլլալու կլաուզուլեիցեան բանականութենէն, առանց յստակ «եւրի ռազմավարութեան» անոնց աւարտը նախաձրարելու համար: Անոնք նախատրամադրուած են մազլցումի, առաւելապաշտ եւ անգլիջող նպատակներու հետամուտ՝ եւ յաճախ, եթէ ոչ ցեղասպանական դիտաւորու-

թեամբ, ապա յստակօրէն Ուրիշին, կամ Միւսին, գոյուլթեան ժխտումով:

Ինչ ալ ըլլայ Մոսկուայի նարատիւր ՆԱԹՕ-ի դէպի արեւելք տարածման մասին, որով փորձ կը կատարուի, եւ կը շարունակուի կատարել, Ուքրանիոյ ներխուժումը բացատրել կամ արդարացնել, պատմաբաններու, միջազգային յարաբերութիւններու մասնագէտներու եւ քաղաքական դիտորդներու փաստագրուած համոզումն է, որ Փոլիտիի համար Ուքրանիան, որպէս երկիր եւ պետութիւն, գոյութիւն չունի: Նման եզրակացութեան հասած է, ի միջ ի այլոց, Հարվըրտի իրաւաբանական դպրոցի Մարդկային իրաւանց միջազգային կլինիկայի 2025-ի տեղեկագիրը(1):

Պաղեստինեան Համասի յարձակումը՝ 7 հոկտեմբեր 2023-ին, հրեայ ժողովուրդին համար անմիջապէս կենդանացուց Ողջակիրզման յիշատակը՝ որպէս գոյութեանական սպառնալիք: Թէ ի՞նչ ռազմավարական նպատակ կը հետապնդէր այդ գործողութիւնը իսրայէլեան հողատարածքի վրայ, որուն ոճրագործային տարողութիւնը ամենամեծն էր Ողջակիրզումէն ի վեր, մինչեւ այսօր ալ յստակ չէ: Նուազ յստակ է նաեւ, թէ նման բարբարոսական գործողութեան մը նախապատրաստութեան ընթացքին որքանով հաշուի առնուած էր հակառակորդին հակազդեցութեան հեռանկարը, այսինքն՝ գործողութեան բերելիք «շահ»-ին եւ սպասելի «վնաս»-ին միջեւ կատարուած հաշուարկը: Ամէն պարագայի, իսրայէլացի, հրեայ եւ մինչեւ իսկ պաղեստինցի մտաւորականներ, ինչպէս նաեւ երկու ժողովուրդներու խաղաղ գոյակցութեան յանձնառու գործիչներ, հոկտեմբեր 7-ին ընդմէջէն տեսան հրէական ինքնութեան ապամարդկայնացում, հերքում եւ Իսրայէլի գոյութեան իրաւունքի մերժում՝ յիշեցնելով այդ մասին Համասի ծրագրով բանաձեւուած նպատակը եւ անոր դեկավարներէն մէկուն հրապարակային «խոստումը»՝ հոկտեմբեր 7-ը «կրկին ու կրկին» կրկնելու(2):

Բայց Համասի հոկտեմբեր 7-ի յարձակման իսրայէլեան հակազդեցութիւնն էր, որ շատ աւելի տեսանելի դարձուց ինքնապաշտպանութեան իրաւունքէն անդին՝ ցեղասպանական դիտաւորութեամբ մղուած պատերազմի մը իրողութիւնը: Մարտ 2026-ի դրութեամբ՝ աւելի քան 72,200 պաղեստինցի զոհ եւ 171,900 վիրաւոր՝ երկու պարագաներուն ալ շուրջ 70 տոկոսը կիներ եւ երեխաներ, ինչպէս նաեւ հազարաւոր անհետ կորածներ: Նիւթական վնասներու առումով՝ բոլոր չէնքերուն եւ տու-

ներուն աւելի քան 90 առ հարիւրը վնասուած կամ հիմնայտակ կործանուած է: Քաղաքներն ու թաղամասերը վերածուած են մոխրակոյտերու, ուր կեանքի որեւէ նշոյլ անհնար դարձած է: Կազան վերածուած է անբնակելի տարածք:

«Կազայի մէջ տիրող աւերածութիւնը գրեթէ անըմբռնելի է: Այսօր Կազան երկրագունդի ամենաշատ քանդուած վայրերէն մէկն է: Մեր վերջին գնահատումով՝ վերականգնման եւ վերաշինութեան համար անհրաժեշտ է 70 միլիառ ամերիկեան տոլար: Մենք ականատես ենք մօտ 55 միլիոն թոն փլատակներու, որոնք ներկայիս կը գտնուին Կազայի գօտիին մէջ: Ասիկա բաւարար քանակութիւն է Կիզայի 13 մեծ բուրգերը լեցնելու համար: Ասիկա մարդածին անդունդ մըն է, ուր գոյատեւման իւրաքանչիւր յենասիւն զգալիօրէն խաթարուած է՝ ջնջելով աւելի քան 20 տարուան զարգացման յառաջընթացը՝ երկու տարուան նուազ ժամանակամիջոցի մը մէջ», համաձայն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (UNDP) մասնաւոր ներկայացուցիչին(3):

Դեկտեմբեր 2023-ին Հարաւային Ափրիկէն Իսրայէլին դէմ դատական գործ յարուցեց Արգարադատութեան միջազգային ատեանին (ICJ) մէջ՝ պնդելով, որ անոր ռազմական գործողութիւնները Կազայի մէջ կը խախտեն 1948-ի Յեղասպանութեան համաձայնագիրը: Ատեանը 2024-ի յունուարին արձակեց նախնական վճիռ մը, որով հրահանեց Իսրայէլին ձեռնարկել բոլոր միջոցները՝ կանխելու համար ցեղասպանական արարքները: Եւ թէեւ (ընդհանրապէս արեւմտեան) շատ երկիրներ «սխալ» որակեցին Փրեթորիայի նախաձեռնութիւնը(4), ցեղասպանական ոճիրի զոհ գացած ժողովուրդի մը պետութեան ինքնապաշտպանութեան իրաւունքին հիմնաւորումով մղուած պատերազմին մէջ ցեղասպանութեան դիտաւորութեան ամբաստանութիւնը այնքան ակնառու է, որ արդէն ստեղծած է հանրային բանավէճ՝ քաղաքական թէ փիլիսոփայական-բարոյական ոլորտներուն մէջ(5):

Իտալացի մտածող Ֆրանքօ Պիֆօ Պերարտին Կազան կը նկարագրէ որպէս «քամերաներով Աուշվից» (Auschwitz)(6), իսկ միջազգային յարաբերութիւններու մէջ պատերազմի եւ ցեղասպանութեան հարցերու մասնագէտ Մարթին Շաու դիտել կու տայ, որ Կազան երեւան հանեց թէ պետութիւնները, որոնք ենթադրաբար ցեղասպանութեան կանխարգիլման յանձնառուութիւն վերցուցած էին, ոչ միայն կը ձախողին կանխարգիլել ցեղասպանութիւնը, այլեւ՝ իրենք կը գործեն ցեղասպանութիւն: «Այլեւս երբեք»-ը (Never Again) տիեզերական պաշտպանութեան մանտրա մը չէ, այլ միայն՝ հրեաներու պաշտպանութեան, որ շնականօրէն կ'օգտագործուի պաղեստինցիներու ջարդը արգարացնելու համար(7):

Կազայի պատերազմին մէջ ցեղասպանական դիտաւորութեան մէկ այլ երեսը երեւան եկաւ անոր ապագային մասին ԱՄՆ-ի նախագահ Թրամփի առաջարկած ծովափնեայ շքեղ հանգստավայրի մը կառուցման ծրագրին ընդմէջէն: Աշխարհին խաղաղութիւն բերելու եւ պատերազմները աւարտելու խոստումով 2025-ին Սպիտակ տուն վերադարձած Տոնյալ Թրամփը, ոչ անսպասելիօրէն, ամբողջական զօրակցութիւն յայտնեց իր մօտիկ բարեկամ Նեթանիահուսին եւ առաջ քաշեց Կազայի մէջ յետպատերազմեան բարգաւաճման իր «անշարժ գոյք»-ային ծրագիրը, որ, բնականաբար, կը բացառէր Կազայի բնակիչներուն որեւէ բաժնետիրական մասնակ-

ցութիւն...

Աֆղանիստանի (2001) եւ Իրաքի (2003) ամերիկեան զինուորական միջամտութիւններուն յաջորդած «վերաշինութեան» ծրագիրներու օրինակները իրենց մտքին մէջ ունենալով՝ Նուր Արաֆէ եւ Մենտի Թըրները չուշացան Թրամփի առաջարկին հետեւութեամբ արդէն շրջանառութեան մէջ դրուած չորս ուսումնասիրական փաստաթուղթերուն ետին տեսնելու Նօմի Քլայնի 2007-ի աշխատասիրութեան(8) մէջ բանաձեւուած «ազէտի դրամատիրութեան» հարազատ ծրագիր մը(9): Անոնցմէ մէկը նոյնինքն Իսրայէլի կառավարութեան նախաձեռնութիւնն է, իսկ միւս երեքը կազմուած են ԱՄՆ-ի համալսարանական եւ հրէական լոպպիի ու պահպանողական շրջանակներուն մօտիկ ուղեղային կեդրոններու (think tank) մէջ: Երկրորդ մը, ըստ հեղինակներուն, Թրամփի «Միջին Արեւելքի Բիվիերա» ծրագիրը ներշնչողն եղած է: Եւ մինչ բոլոր ծրագիրները յստակօրէն կը նպաստեն շահագրգռուած մեծ դրամագումարին եւ հրէական գաղութներու տարածման՝ բռնազբաւուած պաղեստինեան հողերուն վրայ, զոհասեղանին աներկբայօրէն կը դրուի պաղեստինցի ժողովուրդին ինքնորոշման իրաւունքը: Աւելի'ն, ծրագիրներէն ոչ մէկը մասնաւոր կերպով մտահոգուած կը թուի Կազայի բնակչութեան ճակատագրով:

Կազան այս ձեւով, բառին ամբողջական իմաստով, կը ջնջուի քարտէսէն եւ մարդկային յիշողութենէն: Ամբողջ յարացոյց մըն է՝ ցեղասպանութեան ոճիրը իր լրումին հասցնելու կարելիութեան, որուն պայմանները ստեղծուած են յետ-2020 միջազգային յարաբերութիւններու քառսային ժամանակներուն: Երբ մէկ կողմէ զանգուածային սպանութիւններու եւ քանդումներու հետզհետէ աւելի լայնածաւալ մասշտապ տուող գէնքերով մղուած պատերազմները վերածուած են միջպետական տաքնապնդումներու լուծման առաջնային ալլընտրանքի, եւ միւս կողմէ ամբողջ երկիրներու փաստացի անհետացումը եւ բնակչութիւններու բնաջնջումը, ինչպէս նախորդ դարու երկու համաշխարհային պատերազմներուն, կը բնականոնանան՝ այս անգամ շատ աւելի բացայայտ կերպով՝ յայտարարուած, նկարահանուած եւ աշխարհով մէկ անմիջականօրէն հաղորդուած:

Կը մնայ, որ այդ բոլորը արդէն փորձարկուած էր Կազայէն առաջ: Կամ, ինչպէս օրին Washington Post-ի սիւնակագիր Իշան Թհարուրը գրած է՝ «Կազայի աղէտն անաջ Լեռնային Ղարաբաղ եղած էր»(10): Եւ ան միակը չէ: Արցախի հայաթափումը մանրամասնօրէն տեղեկագրուած է բազմաթիւ մարդկային իրաւանց կազմակերպութիւններու կողմէ, որոնցմէ թերեւս ամէնէն ամբողջականը Freedom House-ի եւ չորս այլ ոչ պետական կազմակերպութիւններու հետազոտողներու պատրաստած փաստաթուղթն է, որ հրատարակուեցաւ 2024-ի յուլիսին(11): Մանրագննին քննարկելի եւ վերլուծելի ետք իրենց հաւաքագրած փաստերը՝ հետազոտողները կը հասնին այն եզրակացութեան, որ Արցախի մէջ տեղի ունեցածը Ատրպէյձանի կողմէ իրականացուած էթնիկ զտման արշաւ մըն է, որուն հետեւանքով վերջ գտած է տարածաշրջանին մէջ հայութեան հազարամեայ ներկայութիւնը: Տեղեկագիրը Ալիեւի կառավարութիւնը կ'ամբաստանէ պատերազմական ոճիրներու գործադրութեան մէջ եւ արարքը կը բնութագրէ որպէս մարդկութեան դէմ ոճիր:

Աւելի'ն. արցախահայութեան դէմ Ատրպէյձանի

ցեղասպանական դիտաւորութեան մասին հազարաւոր տարիներ ընկած տեղահանումէն դեռեւս ամիս մը առաջ Միջազգային քրէական ատեանի առաջին դատախազը՝ արժան-թիւնցի Լուիս Մորենօ Օքամփօ, իր 7 օգոստոս 2023-ի գեկոյցով, ուր ի լուր աշխարհին կը զգուշացնէր, որ Լաչինի միջանցքի շրջափակումը՝ նախորդ տարուան դեկտեմբերէն սկսեալ, պարզապէս քաղաքական հարց էր, այլ՝ ցեղասպանական գործիք, շեշտելով, որ «սովորական միջազգային անմիջական արձագանգ՝ դառնալով ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդէն մինչեւ ԱՄՆ Քոնկրէսի մէջ տեղի ունեցած քննարկումներու հիմք: Անկախ այն հանգամանքէն, որ այդ մէկը չկրցաւ կանխարգելիլ ցեղասպանական դիտաւորութեամբ սկսած եւ ռուս խաղաղապահներու մեղսակից անգործութեամբ կատարուած ատրպէյճանական լայնածաւալ յարձակումը:

Արցախի հայաթափման մէջ Նիկոլ Փաշինեանի կառավարութեան պատասխանատուութիւնը կասկածի տակ չեն դնել միայն անոնք, որոնք Քառասունչորսօրեայ պատերազմէն ետք իրենց քուէով պարտութեան «գլխաւոր պատասխանատու»-ն (իր բառերն են) իշխանութեան վրայ պահեցին՝ հաւատարմով, որ այնուամենայնիւ, ինչպէս Վարչապետը իր գլխաւոր պատասխանատուութիւնը ընդունելէ անմիջապէս ետք արդարացած էր, թէ ինք գլխաւոր «մեղաւոր» էր: Թերեւս պատերազմի պարտութենէն անմիջապէս ետք արդէն իշխող վարչախումբին մօտ հաստատուած էր՝ յանուն «խաղաղութեան», Արցախէն ձեռքազատուելու համոզումը, կամ նոյնիսկ անհրաժեշտութիւնը՝ իշխանութեան վրայ յարատեւելու համար: Բայց այդ համոզումը գոնէ իրենց հետեւորդներուն մտքերուն մէջ ամրագրելու կարիք կար: Ի մասնաւորի՝ երբ պատերազմէն ետք տեղի ունեցած ընտրաշաւին ընթացքին բոլորովին տարբեր բան խոստացած էին: Անհրաժեշտ էր կամաց-կամաց վերաշխուժացնել արցախատեղացիներու հայ արշաւը, որ 2008-2018 տասնամեակին, ոչ բացայայտօրէն, բայց փողոցային մակարդակով եւ սոցիալական դժուար կացութեան մէջ գտնուող շարքային քաղաքացիներուն հետ հաղորդակցութեան ճամբով, առաջ տարած էին:

Եւ եթէ 2018-ի իշխանափոխութեան յաջորդած երկու տարիներուն, հաւատարիմ իրենց պատեհապաշտ եւ ամբոխահաճոյ քաղաքական վարքանոճին, ոչ միայն կասեցուցած էին այդ արշաւը, այլեւ իրենք զիրենք հարիւր ութսուն աստիճան հակառակ դիրքի մէջ դրած էին՝ «Արցախը Հայաստան է եւ վերջ» տխրահուշակ յայտարարութիւններով, ապա պարտութենէն ետք, իրենց վերընտրութեան լոյսին տակ, որդեգրեցին այդ գաղափարի աստիճանական վերաժողովրդականացման մարտավարութիւն մը:

Անոր առաջին նախանշանը հաւանաբար կը տեսնուի Վարչապետին հետեւեալ յայտարարութեան մէջ. «Այսօր միջազգային հանրութիւնը մեզի դարձեալ կ'ըսէ՝ քիչ մը իջեցուցէք Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցով ձեր նշանաձողը, եւ միջազգային մեծ համախմբուածութիւն կ'ապահովէք Հայաստանի եւ Արցախի շուրջ», որ հնչեց 13 ապրիլ 2022-ին՝ Ազգային ժողովի հարթակէն: Հայաստանի ներքին քաղաքականութեան քաջածանօթ վերլուծաբաններուն կը մնայ ուսումնասիրել, թէ ինչպէ՞ս Փաշինեանի կառավարութիւնը Արցախէն վերջնականապէս հրաժարելու գաղափարը տարածեց ժողովրդային մակարդակով, եւ որո՞նք եղան այն գոր-

ծօնները, որոնք օժանդակեցին, որ այդ հայրենուրացութեան հրաւէրը արմատականօրէն չմերժուի: Այսինքն՝ Փաշինեան մնայ իշխանութեան վրայ եւ 2022-ի հոկտեմբեր 6-ին, Փրակայի մէջ, ի լուր աշխարհի պաշտօնականացնէ Արցախէն հրաժարումը:

Այդ պահը անկիւնադարձային եղաւ Արցախի հայաթափման յանգած ատրպէյճանական ցեղասպանական ծրագրին գործընթացի արագացման համար: Այսինքն՝ երբ կը խօսինք Փաշինեանի իշխանութիւններու պատասխանատուութեան մասին, ի մտի պէտք է նաեւ անոնց ուղղակի դերակատարութիւնը Պաքուի մէջ առնուած որոշումներուն մէջ: Թէկուզ եւ շատեր այդ մէկը գոնէ վարկածային կարգով չբացատեն, շատ դժուար է նման դաւաճանութեան մը առարկայական եւ վաւերագրուած փաստեր գտնել: Սակայն նուազ ծանր է նման հեռանկարի ամէն նախանշան գիտակից կերպով անտեսելու վարքագիծի անժխտելի իրողութիւնը:

Աւելի՛ն, մինչ Կազախի «վերաշինութեան» ծրագրերները կ'ահազանգեն՝ հոն տեղի ունեցած, ցեղասպանական դիտաւորութեամբ եւ տակաւին իր աւարտին չհասած պատերազմի մը ոճիւրը իր կատարելագործման հասցնելու քաղաքական կամքի մը հեռանկարին մասին, այն է՝ Կազան եւ անոր բնակչութիւնը վերացնելու թէ՛ քարտէսէն, թէ՛ համամարդկային յիշողութենէն, Արցախի մէջ այդ մէկը արդէն տեղի կ'ունենայ՝ հայութեան հազարամեայ ներկայութեան բնաջնջման շատ յստակ գործողութիւններով, որոնց դիմաց լուռ է նաեւ Փաշինեանի իշխանութիւնը: Ատրպէյճանական մշակութային ցեղասպանութեան վաւերագրական փաստերը չեն պակսիր, եւ աշխատանքը, առանց պետական աջակցութեան եւ ի հեճուկա իշխանութիւններու՝ լուռ թէ բացայայտ ընդդիմութեան, կը շարունակուի: Բայց հանրային խօսույթին մէջ «Արցախ» բառին պաշտօնական գեղջուցումը ինքնին բարացուցական է՝ հոն տեղի ունեցած ցեղասպանական ոճիւրը իր լրումին հասցնելու Փաշինեանի կառավարութեան մեղսակցութեան: Ինչ որ այս կացութիւնը ահաւոր կերպով իւրայատուկ կը դարձնէ՝ գոհին մասնակցութիւնն է ոճիւրի կատարելագործման: Բայց այդ մէկուն մասին նոյնինքն ցեղասպանութեան գոհ գացած ժողովուրդն է, որ պիտի գիտակցի...

Արցախի հայաթափման մէջ պատասխանատուութիւն ունեցող Փաշինեանի կառավարութեան շատ աւելի խորքային՝ «իրական» Հայաստանի եւ «պետականօրէն» սահմանուած ազգային ինքնութեան տիւթոփիական ծրագրերին ներհակ է Յեղասպանութեան «փափուկ» ուրացումը: Հարցը չի վերաբերիր Յեղասպանութիւնը արտաքին քաղաքականութեան օրակարգէն դուրս հանելուն՝ որպէս անպիտան եւ մինչեւ իսկ վտանգաւոր թեմա: Անցնող հինգ տարիներուն հրապարակային կերպով բանաձեւուած մտքեր չեն պակսիր այդ մասին՝ Զարեհ Սինանեանի «Յեղասպանութեան միջազգային ճանաչումը ի՞նչ յաւելեալ արժէք բերած է Հայաստանին»-էն մինչեւ Փաշինեանի՝ «էրթան երկիրներ ճանաչել են Հայոց Յեղասպանութիւնը, հայ ժողովուրդը, Հայաստանի Հանրապետութիւնը ի՞նչ ա շահել դրանից» յայտարարութիւններու տրամաբանութեամբ: Ոչ ալ մի ոմնի յիմար առաջարկը՝ Յեղասպանութեան գոհերու ցանկագրում իրականացնելու, անոնց ճիշդ թիւը իմանալու համար, պէտք է այնքան լուրջի առնել՝ անկախ անոր յառաջացուցած զգուշացումէն ենթակային նկատմամբ: Կամ այն միւսին՝ իշխանակարգի ամենաբարձր մակարդակին

վրայ գտնուողին, որ Յեղասպանութիւնը խորհրդային ՊԱԿ-ի ուղղորդմամբ հաստատուած օրակարգ կը յայտարարէր(12): Լուսարձակի տակ պէտք է բերուին, ի մասնաւորի, այն ակնարկները, որոնք ցեղասպանութեան ոճիրին նսեմացման նախանշաններ կու տան, ինչպէս՝ օրինակի կարգով, յղացքը զեղչել պաշտօնական խօսոյթէն եւ գայն, ա լա Օպամա..., փոխարինել «Մեծ Եղեռն» եզրոյթով՝ բովանդակագրկելու համար անոր իրաւական բնոյթը: Յեղասպանութիւնը, լաւագոյն պարագային, պիտի մնայ լոկ արարողակարգ՝ այն ալ ներհայկական ոլորտով սահմանափակուած:

Յեղասպանութեան «փափուկ» ուրացման քաղաքականութիւնը եւ անոր ամենադատապարտելի արտայայտութիւնները իւրայատուկ են Փաշինեանի կառավարութեան եւ անոր քաղաքական վարքագիծին՝ Քառասունչորսօրեայ պատերազմին պարտութենէն ի վեր: Կրնանք մինչեւ իսկ ըսել, որ անոնք, ակամայ թէ համոզուած, այնքան կարմիր գիծեր հատած են, որ այլեւս իրենց համար ետդարձի ճամբայ չկայ: Այսինքն՝ եթէ յունիսին վերընտրուին, արդէն պէտք է սպասել Յեղասպանութեան «փափուկ» ուրացման օրինականացման: Ընտրութիւններու արդիւնքով իշխանափոխութիւնը միակ յոյսն է այս ընթացքը կասեցնելու եւ ներազգային, թերեւս՝ վերջնական, պառակտումի մը առաջը առնելու՝ «իրական» պետականահայերու եւ միւսներու(ս) միջեւ:

Ատով հանդերձ, Յեղասպանութիւնը քաղաքական օրակարգի վրայ դնելու ներազգային համաձայնութիւն մը տակաւին բացակայ է, քանի որ չեն կամրջուած, մէկ կողմէ՝ Հայ Դատի հետապնդման տրամաբանութեամբ Սփիւռքի մէջ բանաձեւուած Յեղասպանութեան պահանջատիրութիւնը՝ ճանաչում եւ արդարահատոյց, եւ միւս կողմէ՝ Հայաստանի արտաքին քաղաքականութեան հրամայականները, ի մասնաւորի Թուրքիոյ հետ յարաբերութիւններու հարցը՝ փոխըմբռնման եւ համագոր-

ծակցութեան հայեցակարգով: Եւ մինչ այդ քաղաքական գարգացման մակարդակին հասնիլը, անհրաժեշտ է ականջալուր ըլլալ մասնագէտներու անհազանգերուն՝ գիտակցելու համար ցեղասպանութեան վերադարձին աշխարհաքաղաքական բեմահարթակին եւ անոր սպառնալիքին՝ թէ՛ Հայաստանի, թէ՛ Սփիւռքի համար:

Յրիտըմ Հառուս-ի Արցախի հայաթափման պատճառներու տեղեկագրին խորագիրը՝ «Ինչն՞ է Հայեր չկան Լեռնային Ղարաբաղի մէջ», կը յիշեցնէ Օրհան Փամուքի համարձակ յայտարարութիւնը, զոր ան ըրած էր 2005-ի փետրուարին՝ գուիցերիական Tages-Anzeiger թերթին տուած հարցազրոյցի մը ընթացքին. «Այս հողերուն վրայ երեսուն հազար քիւրտ եւ մէկ միլիոն հայ սպաննուեցաւ, եւ գրեթէ ոչ ոք կը համարձակի խօսիլ այդ մասին, բացի ինձմէ»: Թրքական Քրէական օրէնսգիրքի տխրահռչակ 301-րդ յօդուածին հիման վրայ հալածուած եւ դատի տրուած Նոպէլեան մրցանակակիրին հարցազրուումը՝ «Ինչն՞ է Հայեր չկան այս հողերուն վրայ», այսօր նոյնութեամբ կը հնչէ Արցախի պարագային: Այս յօդուածին խորագիրը կը յուշէ նաեւ այլ յայտարարութիւն մը, որով նոյնպէս կը կամրջուին Հայոց Յեղասպանութիւնն ու Արցախի հայաթափումը: Երկրորդ համաշխարհային պատերազմին նախօրեակին Հիթլերի հետտրակտի հարցումը՝ հայերուն մասին, ազգանշան մըն էր գալիք արհաւիրքին, սակայն միջազգային հանրութիւնը անոր պատշաճ ուշադրութիւն չդարձուց:

Նոյն հետտրակտի հարցումին՝ Արցախով բանաձեւուած տարբերակը, այսօր պէտք է ուղղել՝ Կազախի մէջ պատահածը ի մտի ունենալով, ցեղասպանութեան աշխարհաքաղաքականութեան վերադարձով մտահոգ բոլոր բարի կամքի մարդոց, բայց մասնաւորաբար՝ մեզի: Եւ անոնց, որոնք համոզիչ պատասխան չունեցան եւ չունին պոլսահայ մտաւորականին հարցումին՝ Արցախէն յետոյ ո՞ր է գազանին կշտացման սահմանը...

- 1- Anastasiya Donets, Susan H. Farbstain, Tamar Ruseishvili, “Intent to Destroy: Why the World Must Name and Confront Russia’s Genocidal War in Ukraine.” International Human Rights Clinic, Harvard Law School, November 18, 2025.
- 2- Աննոյ շարքին են, ի միջ ի այլոց՝ David Grossman, “Israel is falling into an abyss”, Financial Times, October 12, 2023); Eva Illouz, “L’impensé de la gauche”, Le Monde, October 27, 2023; Einat Wilf, “The Strategy of Denial” and “The War on Return and the October 7 Massacre”, The Sapir Journal, Volume 12 (Winter 2024); Sari Nusseibeh, “A Palestinian Voice of Reason” -Public Statement on the Crisis, published through the Common Ground initiative and distributed via The Times of Israel and Al-Quds academic circles, late October 2023; Bashir Bashir, “October 7 and the Crisis of Mutual Recognition”, Van Leer Jerusalem Institute forum, December 2023, and “The Holocaust and the Nakba in the Shadow of October 7”, Journal of Palestine Studies / Theory & Event (2024); Bernard-Henri Lévy, La solitude d’Israël, Éditions Grasset, 2024.
- 3- UN Geneva Press Briefing and UNDP/World Bank Interim Rapid Damage and Needs Assessment (October 2025/March 2026)
- 4- Գանատայի նախկին Արդարադատութեան Նախարարին մէկ յօդուածը հարազատ կերպով կ’արտացոլէ այս կեցուածքը -ուտ՝ Irwin Cotler, “South Africa is inverting reality by accusing Israel of genocide.” The National Post, January 10, 2024.
- 5- Avi Shlaim, Genocide in Gaza: Israel’s Long War on Palestine, Irish Pages Press, 2025; Gilbert Achcar, The Gaza Catastrophe: The Genocide in World-Historical Perspective, University of California Press and Saqi Books 2025; Pankaj Mishra, The World After Gaza, Penguin Press, 2025.
- 6- Franco ‘Bifo’ Berardi, Pensar después de Gaza. Ensayo sobre la ferocidad y la extinción de lo humano, Tinta Limón, 2025.
- 7- Martin Shaw, «Genocide is the New Geopolitics», E-international relations, February 15, 2026.
- 8- Naomi Klein, The Shock Doctrine: The Rise of Disaster Capitalism. New York: Metropolitan Books/Henry Holt and Co., 2007.
- 9- Nur Arafah and Mandy Turner, “Distraction, Disempowerment, and Dispossession: Disaster Capitalism and the Postwar Plans for Gaza.” Malcom H. Kerr Carnegie Middle East Center, July 24, 2025.
- 10- Ishaan Tharoor, “Before Gaza’s woe, there was Nagorno-Karabakh”. The Washington Post, August 8, 2025.
- 11- Freedom House. Why Are There No Armenians in Nagorno-Karabakh? Washington, D.C.: Freedom House, July 2024.
- 12- Էդվարդ Տանձիկեան, «Վահրամ Տէր Մարտիոսեան. Հայերը ՊԱԿ-ի ուղղորդման կարիքը չունէին 1915 թ. տեղի ունեցածը հասկնալու համար -Արեւմտահայաստանի եւ Արեւմտահայութեան Հարցերու Ուսումնասիրութեան Կեդրոն»: akunq.net, 29.11.2025:

«Քանի դեռ ինչպես հարկն է չի դատապարտուել Հայոց ցեղասպանությունը, մարդկությունը կը շարունակի կանգնել նորանոր ցեղասպանությունների վտանգին դեմ յանդիման» Թուրքագետ Մելինե Անումեան

Հայոց ցեղասպանությունից առաջին օրերից ինչպես էր հարցում ՀՀ կառավարությունը և Սփիւռքի դիրքորոշումներուն, ինչպես նաև թրքական ակադեմիական շրջանակներուն մտեցումներուն մասին՝ ստորև կը ներկայացնենք «Հորիզոն»-ի յատուկ հարցազրույցը թրքագետ և պատմական գիտությունների թեկնածու Մելինե Անումեանի հետ.

Հ.- Հայոց ցեղասպանությունից առաջին օրերից ինչպես էր հարցում ՀՀ կառավարությունը և Սփիւռքի դիրքորոշումներուն, ինչպես նաև թրքական ակադեմիական շրջանակներուն մտեցումներուն մասին՝ ստորև կը ներկայացնենք «Հորիզոն»-ի յատուկ հարցազրույցը թրքագետ և պատմական գիտությունների թեկնածու Մելինե Անումեանի հետ:

Մ.Ա.- Ցաւօք Հայաստանի ներկայիս իշխանութիւնները վարում են ոչ միայն պահանջատիրութիւնից, այլև անգամ Հայոց ցեղասպանութեան միջազգային նախաձեռնում պայքարից հրաժարուելու փառապաշտութիւն: Ներկայիս կառավարութեան այս վարքագիծը յղի է բազմաթիւ վտանգներով. եթէ այն շարունակուի, Հայոց ցեղասպանութիւնն առայժմ չնանաչած և անգամ մինչ այդ նանաչած պետութիւնները կարող են հրաժարուել այս թեմայով որեւէ անգամ ձեւական յայտարարութիւններ անելուց՝ այդ վարուելակերպը հիմնադրուելով այն իրողութեամբ, թէ դա կարող է վտանգել Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնների գարգացման գործընթացը:

Այս ուղղութեամբ շատ անելիքներ ունեն հայ գիտնականները: Եթէ մինչ այդ հայ մասնագետների հիմնական պայքարն ուղղուած էր Թուրքիայի ուրացման փառապաշտութեանը, ապա այժմեան իրականութիւնը պարտադրում է նրանց աւելի ակտիւ և անհանդուրժող ձեւով արձագանգել ՀՀ ներկայիս իշխանութիւնների՝ Հայոց ցեղասպանութեան և, ընդհանրա-

պէս, Հայկական հարցի նկատմամբ բուրժուական դիրքորոշմանը: Մեր գիտնականները և մտաւորականները չպէտք է սահմանափակուեն Հայոց ցեղասպանութեան թեմայով գուտ գիտական գործունէութեամբ, այսինքն՝ յօդուածներ և գրքեր հրատարակելով, այլ նաև՝ ուղղակի պարտաւոր են հանրային ֆենարկումներ կազմակերպել ՀՀ կառավարութեան հակահայկական յայտարարութիւնների և վարքագծի դէմ, նաև հրապարակաւ ֆենարտել Հայոց ցեղասպանութեան հարցում Թուրքիայի հարիւրամեայ դիրքորոշումից գրեթէ չտարբերուող ՀՀ իշխանութիւններին:

Հ.- Հնարաւոր է Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորում առանց Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչման:

Մ.Ա.- ՀՀ ներկայիս իշխանութիւնները և, անշուշտ, Թուրքիան փորձում են դա հնարաւոր դարձնել, սակայն չպէտք է հնարաւոր լինի: Դա նոյնն է, որ մի մարդ սպաննի մէկ այլ ընտանիքի անդամին, յետոյ մօտեմայ սպանուածի հարագատներին և առանց որեւէ գղջման խօսքի կամ արարքի՝ պահանջի բարիդրացիական յարաբերութիւններ ունենալ, կարծես թէ ոչինչ չի էլ պատահել: Մի՞թէ այդ պայմաններում տուեալ ընտանիքի համար հնարաւոր կը լինի մոռանալ անցեալը և իր սպանուած հարագատին, ու լաւ յարաբերութիւններ կառուցել վերջինիս սպանողի հետ: Ի՞հարկէ՞ ո՛չ: Նոյնն էլ պէտք է որ զգայ հայ հասարակութիւնն ու ժողովուրդը: Հայ-թուրքական յարաբերութիւնները հնարաւոր կը լինի կարգաւորել միայն այն դէպքում, երբ Թուրքիան ոչ միայն առերեսուի իր արիւնակի անցեալի հետ, նաև չի Հայոց ցեղասպանութիւնը, այլ նաև՝ հանդէս գայ միջազգային իրաւունքից բխող պարտաւորութիւններով՝ ներքին և արտաքին հողային փոխհատուցմամբ: Ի վերջոյ, եթէ նման մասշտապի յանցագործութիւնն անպատիժ է մնում, այն վերստին կրկնուելու վտանգի տակ է: Դա ապացուցուել է թէ՛ Թուրքիայի և թէ՛ ցեղասպանական գործողութիւնների հակուած այլ պետութիւնների



օրինակներով...

Հ.- Արդեօք թուրքական ակադեմիական շրջանակներում նկատուած են մտեցումների փոփոխութիւններ 1915 թուականի իրադարձութիւնների վերաբերեալ, արդեօք նրանք միտուած են այդ իրադարձութիւնները կոչելու իրենց անունով, այն է՝ Հայոց ցեղասպանութիւն:

Մ.Ա.- Թուրքական գիտական շատ սահմանափակ շրջանակներում վերջին 2 տասնամեակներում, ի հարկէ, նկատուել է որոշակի փոփոխութիւն Հայոց ցեղասպանութեան հարցի հանդէպ դիրքորոշման ուղղութեամբ: Եթէ մինչ այդ գրեթէ ոչ մի բուրք չէր համարակուում իրերը կոչել իրենց անուններով, ապա էրտողանի իշխանութեան տարիներին որոշ գիտնականներ սկսեցին համեմատաբար աւելի ազատօրէն ֆենարկել Հայոց ցեղասպանութեան թեման: Սակայն, ինչպէս նշեցի, պէտք է ունեցնել նրանց բիւր. եթէ նկատի ունենանք, որ Թուրքիան 85-86 միլիոնանոց բնակչութիւն ունի, ապա մատների վրայ հաշուուող այդ բուրք մտաւորականների ֆանակը գրեթէ աննշան կը համարուի: Ի դէպ, նշեմք, որ եթէ 2008-2018 թթ. Հայոց ցեղասպանութեան թեման աւելի ազատ և ակտիւ էր ֆենարկուում բուրքական հասարակութեան մէջ, ապա դրանից յետոյ նկատուեց այդ ազատութեան սահմանափակում և Հայոց

ցեղասպանութեան թեմայով ֆննարկումներ, յիշատակի արարողութիւններ եւ այլ միջոցառումներ անելու արգելքների ան: Դա, ի հարկէ, պայմանաւորուած էր թէ՛ ՀՀ ներկայիս իշխանութիւնների վարձազծով եւ թէ՛ Քուրդիստանի ԵՄ անդամակցութեան ֆաղափակն ուղեգծից որոշակի յետքայլ անելու փաստով:

Հ. – Ի՞նչ դեր ունի Թուրքական Հասարակական կարծիքը այս Հարցում: Ի՞նչ տրամադրութիւններ կան Թուրքիայում՝ Հայոց ցեղասպանութիւնը ճանաչելու Հարցում:

Մ.Ա. – Թուրքիայում հասարակական կարծիքը, ի հարկէ, կարող է շատ մեծ դեր ունենալ այս հարցում: Սակայն, այս երկրում ներկայիս տրամադրութիւնները բացասական են: Ինչպէս նշեցի, վերջին տարիներին ոչ միայն պակասել է Հայոց ցեղասպանութեան թեմայով Թուրքիայում ֆննարկումների թիւը, այլ նաեւ հակառակ գործընթացն աւելի է ակտիւացել: Վերջին մի քանի տարում բուրբական իշխանութիւններն աւելի յանախ են արգելում այդ թեմայով միջոցառումների անցկացումը եւ մինչեւ իսկ դատական գործընթացներ են սկսում դրա դէմ: Վերջերս յայտնի դարձաւ, օրինակ, որ տիրահոշակ 301-րդ յօդուածով Տիարպեֆիքի գլխաւոր դատախազութիւնը դատական հայց է ներկայացրել Մերձաւոր Արեւելքի կիւնոակադեմիայի սանցիացիայի երբեմնի փոխնախագահ Ռոջեիլաք Ա.սույի դէմ՝ Տիարպեֆիքում «Աւրորայի լուսաբացը»

անիմացիոն ֆիլմի ցուցադրութեան պատճառով: Այն դէպքում, երբ 2010-2017 թթ. ամէն տարի Թուրքիայում կազմակերպւում էին Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին նուիրում տարատեսակ արարողութիւններ, ապա 2018 թ. սկսած՝ բուրբական իշխանութիւնները դարձեալ սկսեցին արգելել նմանօրինակ միջոցառումները: Եթէ ՀՀ կառավարութիւնը շարունակի ներկայիս ոչ հայնպաստ ֆաղափակութիւնն այդ ուղղութեամբ, ապա Թուրքիան բնականաբար կը կարողանայ վերջնականապէս ազատուել պատասխանատուութեան այդ ծանր բեռից, եւ բուրբական հասարակութեան մէջ մինչ այդ սկսուած ֆննարկումները հետզհետէ կը մարեն: Բացի այդ՝ վերջին 5-6 տարիներին նկատելի է նաեւ Հայոց ցեղասպանութեան ժխտման ուղղութեամբ Թուրքիայում «գիտական» համաժողովների, սեմինարների եւ այլ միջոցառումների թուի ան:

Հ. – Այժմ տեսնո՞ւմ էք Հեռանկար, որ մօտ ապագայում Թուրքիան կարող է վերանայել իր պաշտօնական դիրքորոշումը Հայոց ցեղասպանութեան ճանաչման գործընթացում: Կա՞ն արդեօք արտաքին գործօններ, որոնք կարող են նպաստել այդ գործընթացին:

Մ.Ա. – Ցաւօք, մօտ ապագայում նման հեռանկար չեմ տեսնում՝ վերը նշուած պայմաններից ելնելով: Թուրքիայում Հայոց ցեղասպանութեան հարցի նկատմամբ պաշտօնական դիրքորոշումը

կարող է փոխուել միայն այն դէպքում, երբ նախ եւ առաջ փոխուի մեր իշխանութիւնը, ՀՀ նորընտիր կառավարութիւնը վերադառնայ Հայոց ցեղասպանութեան նախաձեռնման եւ դատապարտման արդար պահանջին, ապա ՀՀ իշխանութիւնների կողմից վերակտուի այն ակտիւ պայմարը, որ 100 տարի շարունակ մղել էին Սփիւռքը, հայ գիտնականները եւ դիւանագետները: Այս գործընթացին նպաստող արտաքին գործօններ կարող են լինել ոչ միայն արտասահմանցի ցեղասպանագէտների դիրքորոշումը, այլեւ ներկայիս ցեղասպանական արարքների բացայայտ ֆննադատումը, օրինակ, Իսրայէլի՝ Կազայում կատարած ռազմագործութիւնների դատապարտումը: Ներկայիս աշխարհաֆաղափական եւ տարածաշրջանային իրողութիւններում շատ կարեւոր է, այս պատերազմական գործողութիւնների աւարտից յետոյ վերականգնուի ոչ միայն խաղաղութիւնը, այլ նաեւ մարդկայնութեան դէմ կատարուած յանցագործութիւնները դատապարտելու, դրանց հեղինակների պատժելու աւանդոյթը: Քանի դեռ ինչպէս հարկն է չի դատապարտուել Հայոց ցեղասպանութիւնը, մարդկութիւնը կը շարունակի կանգնել նորանոր ցեղասպանութիւնների վտանգին դէմ յանդիման, ինչպէս դա տեսնում ենք Կազայում եւ այլ տարածքներում...

Հարցազրոյցը վարեց Յասմիկ Պալէեան



Անիի Սուրբ Առաքելոց եւ Աստուածածնի Սուրբ Գրիգոր եկեղեցիներ

Հայոց ցեղասպանության պահանջատիրությունն ու նոր զարգացումները

Գեորգ Ղուկասեան

Քաղաքական գիտությունների թեկնածու.

ՀՅԴ Բիւրոյի Հայ դատի կեդրոնական գրասենյակի յատուկ ծրագրերի պատասխանատու

Վերջին տարիներին միջազգային յարաբերութիւններում տեղի ունեցած եւ շարունակուող փոփոխութիւններն ու վայրիվերումները իրենց բնոյթով թերեւս ամենախոշորներից են Երկրորդ Համաշխարհային պատերազմից յետոյ: Նախորդ դարի երրորդ քառորդում ձեւաւորուած աշխարհակարգը՝ հիմնուած ուժի փոխզսպման եւ հակակշռման համակարգի վրայ, եւ արտայայտուած հիմնականում միջազգային իրաւունքով, միջազգային յարաբերութիւնների նորմերով եւ կազմակերպութիւններով, ահնայատուէն ճաքեր է տուել: Աշխարհակարգի ճգնաժամի, միջազգային յարաբերութիւններում խաղի նոր կանոնների անհրաժեշտութեան մասին այսօր խօսում են միջազգային դրեթէ բոլոր գերակատարները, անկախ աշխարհաքաղաքական կշռից:

Մեր օրերի մի քանի խոշոր պատերազմները, տնտեսական գերակայութեան խելայեղ մրցավազքը նոյնիսկ աւանդաբար դաշնակից հանդիսացող երկրների միջեւ, միջազգային կազմակերպութիւնների՝ առաջին հերթին ՄԱԿ-ի եւ ԵԱՀԿ-ի կարգաւորող գործառոյթների աննախընթաց թուլացումը կամ բացակայութիւնը վաղուց արդէն պարզագոյն ճշմարտութեան են վերածել այն պնդումը, որ աշխարհն այսօր ապրում է անկանխատեսելի փոփոխութիւնների, երկրների շահերի անկանխատեսելի համադրումների եւ նոյնքան անկանխատեսելի հակադրութիւնների անորոշ մի ժամանակաշրջան:

Վստահ, մարդկութիւնը միջազգային յարաբերութիւնների այս հերթական վերիվայր ժամանակահատուածը նոյնպէս յաղթահարելու է. մեզ նման փոքր պետութիւնների մարտահրաւէրը այս անորոշութիւնից դուրս գալն է հնարաւորինս փոքր կորուստներով, երբ նախկին զսպման միջոցներն այլեւս չեն աշխատում, իսկ նորի խոստումները գեռեւս առարկայական չեն: Յաւօք սրտի, վերջին տարիների մեր կորուստները բաւական են պնդելու, որ մեզ չի յաջողուել այս գործընթացն անցնել հնարաւորինս քիչ կորուստներով, բայց ցանկացած կորուստից յետոյ յաջորդ կորուստի բացակայութիւնը ապահովագրուած է: Հետեւաբար, Հայաստանի Հանրապետութիւնը կարիք ունի մի կողմից ապահովելու պետութեան կենսունակութիւնը, միւս կողմից՝ պաշտպանելու մեր ազգային ու համամարդկային գաղափարները:

Այսօր, Հայաստանից պահանջուող հերթական գիշումները ոչ այնքան այլեւս տարածքային են (չնայած դրանք էլ կան), որքան գաղափարաբանական: Այդ պահանջները սպառնում են Հայաստանը լաւագոյն դէպքում դարձնելու գաղափարագուրկ եւ հարեւաններից կենսական կախուածութեան մէջ գտնուող պետութեան՝ առանց ազգային դիմագծի, համամարդկա-

յին առաջնահերթութիւնների եւ անցեալի յիշողութեան: Նման պահանջներից մէկը Հայոց Յեղասպանութեան ճանաչման պահանջատիրութիւնը դադարեցնելն է:

Հարց է ծագում, ինչո՞ւ են մեր հակառակորդներն այդքան նախանձախնդրութեամբ պայքարում Հայոց Յեղասպանութեան ճանաչման օրակարգի դէմ, այն պայմաններում, երբ դա երբեք չի եղել Թուրքիայի հետ յարաբերութիւնների հաստատման նախապայման, Հայոց Յեղասպանութեան ճանաչման հարցը երբեք չի եղել Հայաստանի երկկողմ ու բազմակողմ յարաբերութիւններում նախապայմանային նշանակութեան հարց: Ի հարկէ, Հայաստանի նախկին իշխանութիւնների օրօք հետապնդուել է Հայոց Յեղասպանութեան ճանաչման քաղաքական օրակարգը՝ յանուն պատմական արդարութեան, յանուն համամարդկային արժէքների, յանուն Հայաստանում եւ աշխարհում յետագայ ցեղասպանութիւնների կանխարգելման, յանուն նոյնիսկ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնների բնականոն եւ անկաշկանդ հաստատման:

Հայաստանի իշխանութիւնների յայտնի դիրքորոշումների, Արցախի հայաթափման, մեր տարածաշրջանում խոշոր պատերազմական գործընթացների, Հայաստան-Ատրպէյճան անարժանապատիւ յարաբերութիւնների եւ հայ-թուրքական դրեթէ կանգնած բանակցային գործընթացի պայմաններում մենք մօտենում ենք Հայոց Յեղասպանութեան զոհերի ոգեկոչման 111-րդ տարելիցին: Ոգեկոչման ու յիշատակման միջոցառումների, սրբադասուած մեր նահատակների բարեխօսութիւնը խնդրելուն, տարբեր երկրներից ու կազմակերպութիւններից ստացուող ցաւակցական խօսքերին զուգահեռ՝ հայ քաղաքական միտքը պէտք է զգրայանգի, թէ ի՞նչ ուղղութեամբ պէտք է շարունակուի Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման եւ հետեւանքների վերացման գործընթացը: Այս համատեքստում Հայաստանի իշխանութիւնների դիրքորոշումներն այնքան պարզ ու պարզամիտ են, որ արժանի չեն նոյնիսկ անդրադարձի, սակայն ահնայատու է, որ վերափոխուող աշխարհում, որը մեծ հաւանականութեամբ նախկինը չի լինելու, Հայոց Յեղասպանութեան պահանջատիրութեան գործը պէտք է հետապնդուի՝ հաշուի առնելով առկայ իրողութիւնները:

Հայաստանի Հանրապետութեանն ու հայկական սփիւռքին ժամանակին յաջողուել էր Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման հարցի շուրջ միջազգային ընկալունակութիւն ստեղծել ոչ թէ հակաթուրք պայքարի շրջանակում, այլ քաղաքակրթական դիրքաւորման: Դրանով էր պայմանաւորուած, որ սկսած 1990-ականների սկզբից Հայաստանի Հանրապետու-

Թիւնը միջազգային կառույցներում, յատկապէս ՄԱԿ-ում դիրքաւորուեց որպէս ցեղասպանութիւն յանցագործութեան դէմ միջազգային պայքարի առաջամարտիկ, յաճախ կազմակերպիչ:

Առաջին բանաձեւը Հայաստանը ներկայացրեց դեռևս 1998 թ. ՄԱԿ-ի Մարդու իրաւունքների յանձնաժողովում: Այն վերաբերել է «Ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխարգելելու եւ պատժելու մասին» պայմանագրութեան ընդունման 50-ամեակին: Յաջորդիւ ներկայացուած չորս բանաձեւերը բովանդակային առումով աւելի կատարելագործուեցին եւ ընդլայնուեցին: Կարեւորագոյն ձեռքբերումներից մէկն էր, որ առաջին իսկ բանաձեւից Հայաստանին յաջողուեց տեքստում ամրագրել համապատասխան յղում՝ պատերազմական յանցագործութիւնների եւ մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութիւնների նկատմամբ վաղեմութեան ժամկէտ չկիրառելու մասին 1968 թուականի ՄԱԿ-ի պայմանագրութեան:

Հայաստանի Հանրապետութիւնը հսկայական աւանդ է բերել ցեղասպանութիւնների միջազգա-

յին ճանաչման, վաղ կանխարգելման մեխանիզմների ներդրման, ցեղասպանուած եւ ցեղասպանուող ժողովուրդների խնդիրների շարունակական միջազգայնացման եւ մարդասիրական նախաձեռնութիւնների խթանման միջազգային ջանքերում:

Արդէն ՄԱԿ-ի Մարդու իրաւունքների յանձնաժողովի շրջանակներում Հայաստանի կողմից նմանատիպ բանաձեւեր են նախաձեռնուել եւ ընդունուել 1998, 1999, 2001, 2003 եւ 2005 թթ.: 2008 թ., երբ ՄԱԿ-ի Մարդու իրաւունքների յանձնաժողովը վերանուանուեց Մարդու իրաւունքների խորհրդի, Հայաստանի առաջարկութեամբ ցեղասպանութիւնների կանխարգելման վերաբերեալ բանաձեւեր ընդունուեցին 2008, 2013, 2015, 2018, 2020, 2022 թթ.: Հէնց Հայաստանի առաջարկով է Գլխաւոր Վեհաժողովը դեկտեմբերի 9-ը սահմանել որպէս Ցեղասպանութեան գոհերի յիշատակի եւ արժանապատուութեան միջազգային օր:

Հայաստանը 2015, 2016, 2018 եւ 2022 թթ. նախաձեռնել եւ կազմակերպել է նաեւ «Ընդդէմ ցեղասպանութեան յանցագործութեան» միջազգային ֆորումները:



«Ընդդէմ ցեղասպանութեան յանցագործութեան» 2-րդ միջազգային ֆորում (Ապրիլ 2016 - ԵՐԵՒԱՆ)

Քաղաքակրթական համատեքստից բացի, Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման խնդիրը Հայաստանի համար ունի նաեւ անվտանգային եւ ինքնապաշտպանական նշանակութիւն: Աշխատելով ցեղասպանութեան միջազգային ճանաչման ուղղութեամբ՝ Հայաստանը ուղղակի կամ անուղղակի ցուցել է ցեղասպանական այն վտանգը, որ Թուրքիան, Ցեղասպա-

նութեան մերժողականութեան քաղաքականութեամբ, շարունակում է յարուցել Հայաստանի դէմ: Արցախում կատարուած իրադարձութիւնները դարձան հէնց այդ վտանգի առարկայացումը:

Ինչ ընթացքով էլ որ զարգանան ներկայ անորոշութիւնները, ինչպէս աշխարհի տարբեր հակամարտային գօտիներում, այնպէս էլ մեր տարածաշրջանում,

մի բան ակնյայտ է՝ աշխարհն ալլեւս առաջուկն չի լինելու: Միջազգային իրաւունքի սկզբունքներն ու նորմերը վստահաբար կը վերահաստատուեն, կը ձեւաւորուեն ազդեցութեան նոր շրջանակներ, միջին ուժի տէր պետութիւնները կը փորձեն ձգտել աւելիին, բայց կը փոխուի միջազգային յարաբերութիւնները տարբեր դերակատարները քաղաքական վարքն ու առաջնահերթութիւնները:

Այս պայմաններում մենք կարիք ունենք անդրադառնալու Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման եւ պահանջատիրութեան հարցին, ինչպէս ներկայում, այնպէս էլ նոր ձեւաւորուելիք միջազգային յարաբերութիւնների պայմաններում: Հնարաւոր է վերափոխուող միջազգային յարաբերութիւնների արդիւնքը ուղղակիօրէն ազդի Հարաւային Կովկասի, տարածաշրջանային երկրների փոխկապակցուածութեան աճի եւ ալլենի վրայ: Միջազգային լոգիստիկ ճգնաժամերի պայմաններում, Հարաւային Կովկասի պետութիւնները եւ ոչ միայն նրանք, կարող է ներգրաւուեն տարանցիկ տարբեր ծրագրերում: Պատասխանը կարծում ենք պարզ է՝ հնարաւորութիւնը չի կարելի բացառել, չնայած այս պայմաններում Ատրպէյճանի պահուածքը ակնյայտ վերապահումներ է ունենալու, ինչին կ'անդրադառնանք առաջիկայում:

Ամէն դէպքում, Հայաստանն առաջիկայում մեծ հաւանականութեամբ կարող է առերեսուել Թուրքիայի հետ դժուարին յարաբերութիւնների, ուստի հայկական քաղաքական միտքը պէտք է դրան պատրաստ լինի: Հակառակ պարագան տեսնում ենք ներկայ բանակցային գործընթացում, երբ Հայաստանի իշխանութիւնների լաւատեսութեան եւ զիջումային տրամադրութեան պայմաններում նոյնիսկ Թուրքիան որեւէ կերպ չի գնում յարաբերութիւնների կարգաւորման, նոյնիսկ չի իրականացնում երրորդ երկրների քաղաքացիներին վերաբերող եւ արդէն իսկ ձեռք բերուած պայմանաւորուածութիւնները:

Հայոց ցեղասպանութեան խնդիրը շարունակելու է անկիւնաքարային տեղ զբաղեցնել Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ յարաբերութիւնների կարգաւորման ցանկացած գործընթացում: Այս խնդրին վերաբերող ամենահաւանական հեռանկարները կարող են լինել հետեւեալները՝

1.- Հայաստանը Թուրքիայի ճնշմամբ դադարեցնում է ինչպէս Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը, այնպէս էլ փոխում է դրա վերաբերեալ ներհայաստանեան խօսույթը, ընդհուպ մինչեւ պետական յիշատակման աստիճանի նուազեցում եւ պատմութեան վերախմբագրում:

2.- Հայաստանը շարունակում է Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման քաղաքականութիւնը կամ աւնուագն չի խոչընդոտում դրան. Հայոց Յեղասպանութեան պետական յիշատակութիւնը, ցեղասպանագիտութեան զարգացումը եւ Հայոց Յեղասպանութեան խնդրի միջազգայնացումը շարունակուում է:

3.- Հայաստանն ու Թուրքիան պայմանաւորուում են, որ երկու կողմերը Հայոց Յեղասպանութեան վերաբերեալ ունեն ուրոյն պատկերացումներ, որոնք ենթակայ չեն քննարկման, փոփոխութեան կամ վերանայման, ուստի այս խնդրի բանակցային քննարկումը իմաստ չունի:

Թէ ո՞ր ուղղութեամբ կ'ընթանան զարգացումները, վստահաբար կախուած չի լինելու միայն Թուրքական պատկերացումներից, եթէ Հայաստանում ձեւաւորուի իսկապէս պետական ու ազգային շահերին սպասարկող իշխանութիւն: Հայաստանը բազմաթիւ ուժեղ կուռաններ ունի Յեղասպանութեան հարցը Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններում Թուրքական կողմի պահանջներից ձեռքազատելու համար: Նախ, Հայոց Յեղասպանութիւնն պատմութեան ամենաուսումնասիրուած եւ որպէս այդպիսին միջազգային ամենամեծ ճանաչումն ունեցող յանցագործութիւններից մէկն է: Այն վաղուց դուրս է եկել Հայաստանի եւ հայութեան հետաքրքրութիւնների սահմաններից եւ դարձել է մարդկութեան դէմ գործուած յանցագործութիւնների պատմութեան ուսումնասիրութեան առարկայ, իսկ դրա ճանաչումն ու դատաւարտումը դարձել են ապագայ յանցագործութիւնների կանխարգելմանն ուղղուած քայլ: Եթէ նոյնիսկ Հայաստանի իշխանութիւնները հրաժարուեն, քաղաքակիրթ աշխարհը չի հրաժարուելու: Այս մասին Թուրքական կողմը ի հարկէ շատ լաւ գիտի: Բայց պաշտօնական Անգարային պէտք է Հայաստանի յետքայլը, հրաժարումը, որպէսզի «օրինական» հնարաւորութիւն ունենայ նենգափոխելու պատմութիւնն ու արժեքակելու Հայոց Յեղասպանութեան իրողութիւնը՝ դրանով փորձելով անգամ եւս ինքնամաքրուել:

Հէնց այս շեշտադրումները պէտք է դառնան վերափոխուող աշխարհում Հայոց Յեղասպանութեան պահանջատիրութեան պայքարից չհրաժարուելու տեսամեթոդաբանական հիմնաւորումները: Հայոց Յեղասպանութիւնը միայն հայութեան խնդիրը չէ, դա քաղաքակիրթ աշխարհի եւ իրաւունքի գերակայութեան վրայ հիմնուող միջազգային յարաբերութիւնների ջատագով ցանկացած պետութեան եւ միջազգային կազմակերպութեան խնդիրն է: Ինչպէս նշուեց, նոր աշխարհակարգում լաւագոյն դէպքում փոփոխուելու են դերակատարներն ու ազդեցութեան գօտիները, միջազգային իրաւունքի հանրաճանաչ սկզբունքները մնալու են անփոփոխ՝ այդ թւում ցեղասպանութեան եւ մարդկութեան դէմ յանցագործութիւնների կանխարգելմանն ու դատաւարտմանն ուղղուած կարգաւորումները:

Հետեւաբար Հայաստանի եւ Սփիւռքի կողմից Հայոց Յեղասպանութեան, դրա տարբեր դրսեւորումները եւ դրանցով պայմանաւորուած՝ հայութեան ներկայ մարտահրաւէրների շարունակական միջազգայնացումը, մեր կարծիքով, Հայաստանի հանդէպ Թուրքական ճնշման վերացման եւ միջազգային յարաբերութիւնների նոր պայմաններում Հայոց Յեղասպանութեան պահանջատիրութեան շարունակութեան թերեւս ամենաարդիւնաւէտ ձեւն է: Բովանդակ հայութիւնը ունի դա իրականացնելու կազմակերպական, քաղաքական, մտաւոր եւ կրթական անհրաժեշտ ներուժը թէ՛ Հայաստանում եւ թէ՛ Սփիւռքում:

Հայոց Յեղասպանութեան հարցը, ինչպէս նշուեց, ալլեւս դուրս է եկել բացառապէս հայկական իրականութիւնից եւ այն չի կարող ճնշուել Հայաստան-Թուրքիա միջպետական յարաբերութիւններում:

ՏԵՍԱԴԱՇՏ

Միշտ այդ յոյսով ու կամքով

Այս յօդուածի միտք բանիւն ընթերցողին կ'ուզեմ հաղորդել վերադարձ մը կատարելով դէպի անցեալը եւ օգտագործելով 15 եւ 25 տարեկանիս իմ գրած երկու յօդուածները, որոնց առաջինը «Յուսաբեր»-ի մէջ երեւցած իմ առաջին գրութիւնն է, եւ որուն ոգին տակաւին կը յամենայ 70 տարի ետք գրածներուս մէջ եւս: Գալով երկրորդին, ան ալ կ'արծարծէ նիւթ մը, որ այսօր՝ 60 տարի ետք, կը շարունակեմ կրկին ու կրկին բարձրաձայնել: Երկու գրութիւններն ալ կ'առնչուին առիթին՝ Հայոց ցեղասպանութեան, որուն հրէշային գործադրութեան 111-րդ տարին է, որ կը նշուի «Հորիզոն»-ի ներկայ բացառիկով:

Ընթերցողը կրնայ որոշել, թէ կ'արդարանա՞յ այս յետդարձ, թէ կը մեղանչեմ կրկնութեամբ:

ԱՐԵՒԻ ՇՈՂԻԿԸ

Մեծհայրիկիս

Գարուն է... ծաղկաստաններու մէջէն կ'անցնիմ...
Բոլոր ծաղիկներն ալ կը քնանան գունա՛տ, թառա՛մած:

Մթնշաղ է... դեռ չէ ծագած կենսատու «շողիկը»:
Ո՛րքան տրտում եւ տխուր են ծաղիկները աղջամուղջին մէջ: Տխուր եմ նաեւ ես:

Տխուր օրուան մը առաւօտն է այս. արդեօք ծաղիկներն ալ կը սգան...

Կը մտածեմ այն միլիոն գոհերուն վրայ, որոնք, իրենց ճակատագրէն մղուած, դացին դէպի անապատները Տէր Զօրի:

Եւ կը մտածեմ այն մտաւորականներուն մասին, որոնք Ապրիլ 24-ի դիշերը խաբէութեամբ քաղաքէն դուրս տարուեցան եւ բոլորն ալ անխտիր սպանուեցան բարբարոսներու ձեռքով:

Սակայն մեր որբ հայորդիները յամառօրէն ապրեցան, հոգ չէ թէ չոր ու տաք աւազին վրայ. ապրեցան՝ կառչած իրենց վերջին գէնքին՝ «այբ-բեն-գիմ»ին, զոր այդ աւազներուն վրայ սորվեցուցին իրենց ծնողները:

Եւ ժողովուրդ մը, որուն զաւակները անապատի աւազին վրայ հեգեր են հայ այբուբենը, միթէ դատապարտուած է ուժանալու կամ կորսուելու: Ազգ մը, որ իր մէկ միլիոնի արեան գնով ստեղծեց ազատ հայրենիք, դատապարտուած է մեռնելու ... Ո՛՞ջ:

Թշնամին չհասաւ իր նպատակին: Կազմակերպեց Ապրիլ 24-ը, սպանեց բազում մտաւորականներ, ջարդեց մէկ միլիոն հայեր, թալանեց մեր երկիրը, տիրացաւ մեր հողերուն, բայց չհասաւ եւ պիտի չհասնի իր նպատակին:

Հայը մնաց կանգուն եւ կանգուն պիտի մնայ յաւելտ, քանի որ մեր մէջ վառ է միշտ հայրենիքի սէրը, ազատութեան տենչը եւ ՅՈՅՍԸ:

Ու յանկարծ արեւի առաջին շողիկին հետ կը տեսնեմ, որ շուրջս բոլոր ծաղիկները կամաց կամաց կ'արթնանան:

Ուրախ է այժմ շողիկը, ուրախ են ծաղիկները, կը հրճուիմ եւ ես ու կ'երգեմ.

«Հին, փառաւոր իմ հայրենիք,
Նորէն կանգներ ես անահ...»

«Յուսաբեր», 21 ապրիլ 1955

ԻՆՉՈՒ ՄԻԱՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ...

Նիւրը իսթ ալուամբի քառասնամեակին առթիւ կազմակերպուած պասքէթ պոլի մրցաշարքը, որուն մասնակցեցան բոլոր հոսանքներու միութիւնները, մեզ կը մղէ հարց տալու, թէ ինչո՞ւ միայն մարզական գետնի վրայ պիտի ըլլայ համերաշխական այդ ոգին:

Ինչո՞ւ չընդլայնել դաշտը եւ չընդգրկել նաեւ մշակութային մարզը: Ինչո՞ւ չկարենանք կազմակերպել, օրինակի համար, արտասանական մրցում մը բոլոր երիտասարդական միութիւններուն միջեւ:

Եթէ համաձայն ենք, որ քաղաքական սա կամ նա տարբեր համոզումներով հայ տղաքը իջնեն մարզադաշտ եւ եղբայրաբար մրցին իրարու դէմ, ինչո՞ւ չընդունինք նաեւ որ համոզումներով տարբեր միեւնոյն տղաքը բեմ ելլեն արտասանելու կամ թատրոն խաղալու համար միասին, կամ պարզապէս միասնաբար պտոյտ եւ արշաւ, պարահանդէս եւ խրախճանք կազմակերպեն:

Եթէ սկզբունքով համաձայն ենք, – այլեւ ամբողջ սրտէ կը ցանկանք, – որ գաղութահայութիւնը այսուհետեւ համերաշխութեամբ գործակցի, այն ատեն ժամանակն է, որ երիտասարդական միութեանց վարիչները քով քովի գան եւ պատրաստեն յատուկ ծրագիր, որ բոլորին միասնական ճիգերով պիտի ըլլայ գործադրելի:

Պասքէթ պոլի մարզական շարժման մէկ երեսն է միայն. պասքէթին կրնայ փինկ-փոնկը յաջորդել: Իսկ մարզական շարժումը երիտասարդական շարժման մէկ կողմն է միայն: Մարզականին կրնայ մշակութայինը յաջորդել: Եւ եթէ իսկապէս շարժում ստեղծուի, հրաշքներ կրնանք գործել անհաւատ այս շրջանին...

Յիշելու համար կարելիութիւններէն մէկը միայն – երիտասարդական տարեկան փառատօն մը մասնակցութեամբ Գահիրէի եւ Ադեքսանդրիոյ բոլոր կազմակերպութիւններուն, երկու օրուան տեւողութեամբ եւ մէկէ աւելի հանդիսութիւններով: Ահա ձեռնարկ մը, որուն մասին կարելի է մտածել այսօրուրէն իսկ եւ Յիսնամեակի տարին չլրացած գայն գլուխ հանել, ցոյց տալու համար թէ համերաշխութեան մասին գրուած եւ արտասանուած բոլոր խօսքերէն ետք եւ ատոնցմէ աւելի կենդանի գործով է, որ կարելի է իրացնել այնքան ցանկալի այդ «ութիւն»ը:

«Յուսաբեր», 12 յուլիս 1965
ՎԻԵՏ-ԱՐՄԵՆ

*Marking the 20th anniversary of the recognition of the Armenian Genocide by
the Government of Canada*

**Statement from Prime Minister Stephen Harper on the
91st Anniversary of the Armenian Genocide
(April 24, 2006)**

I would like to extend my sincere greetings to all of those marking this sombre anniversary of the Medz Yeghern.

Ninety-one years ago the Armenian people experienced terrible suffering and loss of life. In recent years the Senate of Canada adopted a motion acknowledging this period as "the first genocide of the twentieth century," while the House of Commons adopted a motion that "acknowledges the Armenian genocide of 1915 and condemns this act as a crime against humanity." My party and I supported those resolutions and continue to recognize them today.


We must never forget the lessons of history, nor should we allow the enmities of history to divide us. The freedom, democracy, and human rights enjoyed by all Canadians are rooted in our mutual respect for one another.

I join with you today in remembering the past and I encourage you to continue honouring your forefathers by building a bright future for all Canadians.

Sincerely,



The Right Honourable Stephen Harper, P.C., M.P.
Prime Minister of Canada



Հ.Յ. Դաշնակցութեան կողմէ Ռուսոմի Գերկայացուցած յուշագիրը Սթոքհոլմի Ընկերվար Միջազգայնականի համագումարին (1917)

Թարգմանութիւնը.

Անմիջական խաղաղութեան հաստատումը առաջնակարգ նշանակութիւն ունի աւերեալ Հայաստանի համար:

Ան պէտք է կնքուի ռուսական ժողովրդավարութեան(1) հուշակած երեք սկզբունքներուն հիման վրայ: Եթէ մենք հակառակ ենք պատերազմական հարկադրանքի գաղափարին(2), բայց եւ այնպէս կը գտնենք որ արդար է հատուցում պահանջել մասնաւորաբար այն երկիրներուն համար, որոնք աւերուած են՝ մասնաւորաբար մարդկային իրաւունքներու եւ միջազգային դաշնագիրներու դրժուծին հետեւանքով: Այդպիսի պատժամիջոց մը զգալիօրէն պիտի նուազեցնէր ապագայ պատերազմներու վտանգը:

Հակառակ ենք նոյնպէս, ինչպէս էինք նախապէս, հողային բռնագրաւումներուն: Եւ որովհետեւ այս սկզբունքը տարբեր մեկնաբանութիւններու տեղի կու տար, մեր կուսակցութեան ընդհանուր ժողովը (գումարուած Թիֆլիս, 1917 թ. 6-12 Ապրիլին)(3) հարկ տեսաւ ընդգծելու, որ հակաժողովրդավարական կը նկատէ ոչ միայն նուաճուած երկիրներու բռնագրաւումը, այլ նաեւ ժողովուրդներու ենթարկումը իրենց նախկին բռնակալներուն: «Ոչ կցումի» սկզբունքը պէտք է գործադրել անշատաբար, այլ տեսնել զայն «ժողովուրդներու ազատօրէն ինքնորոշուելու» սկզբունքին լոյսին տակ:

Հետեւաբար կը միանանք բոլոր անոնց, որոնք կը պահանջեն ամբողջական վերահաստատումը Պելկիոյ, Սերպիոյ, Մոնթենեկրոյի, Ռումանիոյ, ինչպէս նաեւ միացեալ եւ անկախ Լեհաստանի: Ռուսիայէն գրաւուած բոլոր շրջանները (բացի ռուսական Լեհաստանէն) պէտք է վերադարձուին [ռուս] Հանրապետութեան, որ կ'երաշխաւորէ իր ժողովուրդներուն ազատ ինքնորոշման իրաւունքը: Ռուսիոյ Սահմանագիր ժողովը պէտք է երաշխաւորէ Ֆինլանտային ամէն ազատութիւն. Ֆրանսայէն խլուած Ալգաս-Լոուէնը պէտք է վերադարձուի իրեն, բայց եւրոպական խաղաղութիւնը պահպանելու համար, թերեւս լաւ է որ բնիկ եւ տարագրեալ ժողովուրդի մասնակցութեամբ հանրաքուէի մը միջոցաւ վճռուի վերջնական ճակատագիրը այս նահանգներուն: Պալքանեան ժողովուրդներու շահերը կը պահանջեն ստեղծումը Պալքանեան Համադաշնակցութեան մը: Մակեդոնիան պէտք է իրաւունք ունենայ որոշելու իր ճակատագիրը, այսինքն ան պէտք է կարենայ մաս կազմել Համադաշնակցութեան որպէս անկախ միաւոր եւ կամ միանալ դրացի պետութիւններէն մէկն ու մէկին:

Ազգային փոքրամասնութիւններ ունեցող բոլոր երկիրներուն համար կը պահանջենք, որ որդեգրուի հողային կամ մշակութային ինքնավարութեան սկզբունքը:



քը: Թուրքիոյ, Ռուսիոյ եւ Պարսկաստանի համար, ուր կեդրոնացած է մեր կուսակցութեան գործունէութիւնը, կարեւոր կը նկատենք հետեւեալ պահանջները.

1) Ռուսահայաստանը, Վրաստանի եւ Կովկասի թաթարներուն հետ, պէտք է ըլլայ ինքնավար՝ Դաշնային եւ Հանրապետական Ռուսիոյ ծիրին մէջ, որուն հիմնական օրէնքը պիտի ճշդուի Սահմանագիր ժողովին կողմէ:

2) Ազատ ինքնորոշման իրաւունքը կարելի է մերժել Պարսկաստանին, որ քաղաքական ամբողջական անկախութեան իրաւունք ունի: Մեծն Բրիտանիան եւ Ռուսիան պէտք է վերցնեն Սահմանադրական Պարսկաստանի ազատօրէն զարգացման դէմ պարտադրուած բոլոր խոչընդոտները: Ամբողջովին պէտք է ջնջուի հոն տիրող աւատատիրական եւ աստուածպետական վարչակարգը, եւ պետութիւնը պէտք է կազմակերպուի լայնօրէն ժողովրդավարական հիմերու վրայ: Հայերուն՝ իրողապէս վայելած ազգային եւ մշակութային ազատութիւնները պէտք է ընդլայնուին եւ ամրագրուին հիմնական օրէնքով:

3) Միջազգային ժողովրդավարութեան ուշադրու-

Թիւնը կը հրաւիրենք Թուրքերու տիրապետութեան տակ գտնուող Հայաստանի բացառիկ կացութեան վրայ:

Թուրք ղեկավարներու ամբողջ քաղաքականութիւնը կը ձգտէր հայերու թիւը նուազեցնել իրենց հայրենիքին մէջ, եւ հոն աւելցնել մահմետական զանգուածը: Եթէ սուլթան Ապիւլ Համիտ աւելի եւս շեշտած էր՝ հայերը բնաջնջելու ականդական քաղաքականութիւնը, Երիտասարդ Թուրքերը, միեւնոյն ուղղութեան հետեւելով, որոշեցին մէկ հարուածով աւարտին հասցնել այն գործը, զոր սուլթան Սելիմ պարտադիր դարձուցած էր իր յաջորդներուն համար: Ներկայիս Թուրքերու տիրապետութեան տակ գտնուող հայկական նահանգները գրեթէ պարպուած են հայ տարրերէն, եւ այժմու պայմաններուն մէջ յիշեալ սկզբունքին տառացի գործադրութիւնը մեծ անարդարութիւն պիտի ըլլար, որովհետեւ զաւթողներուն միայն կարծիքը պիտի առնուի:

Հետեւաբար, կը պահանջենք՝

1) Որ միջազգային ժողովրդավարութիւնը իր կարելին ի գործ դնէ վերջ տալու համար հայոց դարաւոր ողբերգութեան՝ հանդուրժուած մինչեւ այսօր կայսերապաշտ պետութիւններու մրցակցութեան պատճառաւ. որ՝ Հայաստանի հողամասը վերադարձուի հայերուն, որոնք արժանի են այդ հատուցման իրենց անցեալի մարտնչուններով, եւ որպէսզի տարագրուած մեր հայրենակիցները կարենան վերադառնալ իրենց օճախները եւ վճռել իրենց ազգային ճակատագիրը: Մեր Փրանսացի ընկերներու արտայայտած բաղձանքին համաձայն, միջազգային ժողովրդավարութեան պարտականութիւնն է հաշուի առնել ոչ միայն վերապրողներու ձայները, այլեւ Թուրք ղեկավարներու զոհերուն (ձայնը), այլապէս ընկերվար ժողովրդավարութիւնը ընդունած ու վաւերացուցած պիտի ըլլար արիւնարբու քաղաքականութիւն մը:

2) Ազատ Հայաստանը պէտք է բովանդակէ հայկական 6 նահանգները եւ Կիլիկիան, բացի մահմետական շրջաններէ, որոնք հայկական նահանգներուն կցուած են 1877-1878ի ոռսսելթուրք պատերազմէն ետք:

3) Հայաստանը պիտի յայտարարուի չէզոք եւ իր չէզոքութիւնը երաշխաւորուի միջազգայնօրէն:

4) Հեքթարի (քիւրտ), Ջուլամերիկի (քաղզէացի) Պոսթամի, Ուրֆայի (քիւրտ), Տրապիզոնի (լազ, յոյն եւ հայ շրջանները), [ինչպէս նաեւ] Սուրիան եւ հրէական Պաղեստինը պիտի կազմեն անջատ միաւորներ: Այս միաւորներու կազմութիւնը եւ անոնց փոխադարձ ու միջազգային յարաբերութիւնները պիտի որոշուին պատերազմէն ետք: Տերսիմի քրտական նահանգը պիտի օժտուի ինքնավարութեամբ: Կոստանդնուպոլիսը հռչակուած է [արդէն] ազատ քաղաք:

5) Որովհետեւ անցեալի սարսափները կրնան տեղի տալ նոր բախումներու, անհրաժեշտ պիտի ըլլայ մասնակի տեղափոխութիւններ կատարել Հայաստանի մէջ բնակող տարբեր տարրերու միջեւ:

6) Թուրք ղեկավարներու կողմէ՝ քաղաքական նպատակներով Հայաստանի մէջ տեղաւորուած մահմետական տարրերը պէտք է վերադարձուին իրենց նախկին վայրերը:

Կը պահանջենք նաեւ՝

1) Որ՝ հատուցում պահանջուի թրքական կառա-

վարութեան՝ պատերազմի ընթացքին բնաջնջուած հայ ընտանիքներուն՝ այն բոլոր նիւթական վնասներուն համար, զորս կարելի է արդարացնել մինչեւ իսկ ռազմավարական նկատումներով. հատուցում՝ այն բոլոր հարստութեանց՝ դրամ, անասուն, ապրանք, կարասի, որ խլուած են հայերէն պատերազմի եւ տարագրութեան ընթացքին՝ պետական գանձին, քաղաքային եւ գինուորական պաշտօնեաներուն, իթիֆհատ կոմիտէի անդամներուն, չեթայական վոհմակներուն, գինուորականներուն եւ մահմետական ամբոխի կողմէ:

2) Որ՝ միջազգային ժողովրդավարութիւնը, մասնաւորապէս Կեդրոնական պետութեան ընկերվար կուսակցութիւնները եւ չէզոք պետութիւնները ազգեցութիւն ի գործ դնեն իրենց համապատասխան կառավարութիւններուն վրայ, որպէսզի ստիպեն օսմանեան կառավարութիւնը որ, չէզոք երկիրներու կամ Թուրքիոյ դաշնակիցներու միջոցաւ, օգնութիւն հասցուի հայերուն, սուրիացիներուն, յոյներուն եւ Պաղեստինի հրեաներուն: Թուրքիոյ դաշնակից երկիրներու ընկերվար կուսակցութիւններու անտարբերութիւնը կը նշանակէ մասնակից ըլլալ՝ մեծ մասամբ կիներէ եւ մանուկներէ բաղկացած ողջ մնացած հայերու բնաջնջումին: Այս ոչնչացումը կը հետապնդուի դանդաղօրէն՝ սովի, գրկանքներու եւ հիւանդութեանց ճամբով:

Չէզոք երկիրներու վրայ կ'իյնայ նաեւ խաղաղութեան կնքումի գործին հետապնդումը: Եւ սակայն, ինչպէս դէպքերու ընթացքը ցոյց կու տայ, [պատերազմի] ազգերու թիւը կ'աւելնայ. անհրաժեշտ է որ չէզոք պետութիւնները ամէն ինչ ի գործ դնեն, որպէսզի արգիլեն իրենց երկիրներուն մասնակից դառնալ ներկայ պատերազմին:

Միջազգային ժողովրդավարութիւնը ներկայ պարագաներուն չի կրնար վստահիլ Թուրքիոյ խորհրդարանին եւ Թուրք ընկերվար կուսակցութիւններու բերելիք նպատին: Եւրոպական նահանգները կորսնցնելէ ետք, Թուրքիոյ մէջ, բացի հայերէն, ընկերվարականներ չեն մնացած: Հայոց ազգային մեծ աղէտին մէջ, Երիտասարդ Թուրքերը ոչ մէկ ողջմտութիւն ունեցան խնայելու ընկերվարականներուն: Ընդհակառակն, առաջին զոհերը դարձան յատկապէս կուսակցականները՝ իմբապիրներն ու նոյնիսկ օսմանեան խորհրդարանի անդամները: Մեր կազմակերպութեան անդամներէն կարելի եղաւ փրկել միայն անոնք որ գէնք վերցուցին ու լեռները բարձրացան: Խմբաբարտուները, կուսակցութեան ակումբները, ժողովրդային Տունները, ճոխ գրադարանները, ամբողջ գիւղացիութիւնը իրենց մէջ ընդգրկող երկրագործական ընկերութիւնները, բանուորական եւ արհեստակցական միութիւնները, համագործակցականները, մարմնամարզական, երգչախմբային, երաժշտական յարակից միաւորները եւ այլն, - Տասնեակ տարիներու յարատեւ ջանքերու արդիւնք այս կազմակերպութիւնը մէկ հարուածով ջնջուեցաւ Երիտասարդ եւ Սահմանադրական Թուրքիոյ կողմէ:

Ինչ կը վերաբերի ընդգրկմադիր տարրերուն, մահմետական ըլլան անոնք թէ՛ այլ, խորհրդարանական կամ ոչ, հակառակ իրենց մեծ թուին, չեն կրնար անոնք արտայայտել իրենց կարծիքը: Երիտասարդ Թուրքերու սահմանադրական վարչակարգը կը խեղդէ նուազագոյն ընդգրկմութիւնն իսկ: Ընդգրկմադիրները պիտի չկարենան գործել բացի այն պարագայէն, երբ Դաշնակիցները յաղթական դուրս գան, կամ եթէ ժողովրդավար վարչա-

կարգ հաստատուի Գերմանիոյ մէջ:

Մեր շրջաններուն եւ առհասարակ Արեւելքի մէջ խաղաղութիւն կրնայ հաստատուիլ միայն այն ժամանակ, երբ Եւրոպան կը վերակազմուի աւելի լայն ժողովրդավարական հիմերու վրայ: Ժողովրդավարութեան յաղթանակը պէտք է յանգի ընդհանուր ապագինումի եւ միջազգային ընկերվարութեան գործունէութեան ընդլայնումին:

Հայաստան – [հարցին] պատմականը

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը քաղաքական առաջին կուսակցութիւնն էր, որ հայկական հարցի լուծումին համար նախապայման չէրաւ Հայաստանի քաղաքական անկախութիւնը, այսինքն Հայաստանի եւ Թուրքիոյ բաժանումը: Թէեւ ծանօթ էինք թուրք բարեկարգիչներ՝ Ռեշատ, Ալի Ֆուատ, Միտհատ փաշաներու փորձերուն, որոնք Ժ. դարու ընթացքին ջանքեր թափեցին Թուրքիոյ վերանորոգութեան համար. ծանօթ էինք նոյնպէս անոնց ապարդիւն եւ երբեմն աղէտալի հետեւանքներուն. կը հաւատայինք այսուհանդերձ որ իրենց [վերանորոգչական] գաղափարը արդիւնաւոր կը դառնայ:

Զախողութիւնը կը վերագրէինք այն իրողութեան որ բարեկարգչական գաղափարներ կրողները քանի մը խմբակներ էին միայն, կամ բարձրաստիճան կարգ մը անհատականութիւններ, մինչ մահմետական զանգուածը ամբողջովին կը հակառակէր նոր գաղափարներուն: Գիտէինք նոյնպէս որ բարեկարգիչները, իրենք, առաջնորդուած չէին ներքին ու բացարձակ այն համոզումով, որ Թուրքիոյ ապագային համար կենսական նշանակութիւն ունէր առաջադրուած միջոցներու իրագործումը եւ, հետեւաբար, երբեմն կը ձեւացնէին որ բարեկարգչութեանը կ'ընէին պարզապէս առաջքն առնելու համար [եւրոպական] պետութեանց միջամտութեան:

Կը խորհէինք, որ 1877-78-ի [պատերազմին] վերիվայրումները խոր փոփոխութիւն առաջացուցած կ'ըլլան թուրքերու մտայնութեան մէջ: Աւելին, ժողովրդավարական նոր գաղափարներու հոսքը չէր կրնար բոլորովին անտարբեր թողուլ Թուրքիոյ մահմետական տարրերը: Թուրք բոլոր ղեկավարներու ջերմ փափաքը եւս, որ կը ձգտէր խուսափել իրենց հայրենիքի ներքին գործերուն մէջ մեծ պետութիւններու միջամտութիւններէն, պէտք է ի վերջոյ մղէր Երիտասարդ Թուրքիոյ ապագայ ներկայացուցիչները, որ անկեղծօրէն հետամուտ ըլլան պահանջուած բարեկարգումներու իրագործումին:

Ապտիւլ Համիտի գործածած դաժան միջոցները թուրքերուն իսկ նկատմամբ, բաւարար փաստ էին, որ մեծ դժգոհութիւն մը կար հին վարչակարգին դէմ:

Եւ մենք յարմար կը գտնէինք մեր նպատակը հետապնդել, որքան կարելի էր, Թուրքիա ապրող միւս տարրերու գործակցութեամբ:

1892 տարուան Ընդհ. ժողովի որոշումներուն համաձայն, Հ. Յ. Դաշնակցութիւնը, բռնատիրական վարչակարգին դէմ իր մղած կատաղի ու անողոք պայքարի ընթացքին, կը ջանար նախընտրաբար թիրախ ընտրել չարիքին այն պատճառները, որոնցմէ կը տառապէին ոչ միայն հայերը, այլ նաեւ միւս ժողովուրդները: Զատագով հանդիսանալով բոլոր ազգերու միասնութեան, կուսակցութիւնը յատուկ ճիգ կը թափէր յատկապէս

թուրք ընդդիմադիր տարրերուն մէջ, նպատակ ունենալով «տիրող ցեղի» յեղափոխական առաջին շարքերու կազմակերպումը: Կուսակցութեան պաշտօնաթերթ «Դրօշակ»-ը ոչ մէկ առիթ կը փախցնէր ընդգծելու համար այն տարբերութիւնը, որ կուսակցութիւնը կը դնէր թուրք կառավարութեան եւ թուրք ժողովուրդին միջեւ, փաստելու համար նոյնպէս, որ մեր պայքարը ուղղուած էր բացառապէս կառավարութեան դէմ եւ այս՝ նոյնիսկ 1895-ի արիւնյալի դէպքերէն ետք, երբ մամուլը բարձրադաղակ կը մեղադրէր բոլոր մահմետականները ընդհանրապէս, իսկ «Դրօշակ» չվարանեցաւ պաշտպանելու մահմետական զանգուածը, հակառակ անոր որ մեծամասնութեամբ այս վերջինիս ձեռքերը թաթխուած էին հարիւր հազարաւոր հայերու արեան մէջ: Մենք կը նկատէինք զայն իբրեւ անգիտակից գործիք սուլթան Ապտիւլ Համիտի կառավարութեան ձեռքին, միակ պատասխանատուն գործուած գազանութիւններուն: Յարմար դատեցինք նոյնիսկ յայտարարելու մեր պաշտօնաթերթ «Դրօշակ»ով եւ Լոնտոնի մէջ կայացած Միջազգային ընկերվար համագումարին ներկայացուցած տեղեկագրին մէջ, որ կը ձգտէր Հայաստանի ինքնավարութեան՝ վերանորոգ, ժողովրդավար եւ դաշնակցային Թուրքիոյ շրջագծին մէջ:

Անմիջական յարաբերութիւններ հաստատուեցան մեր եւ Եւրոպա գաղթած Երիտասարդ Թուրքերու հետ եւ շնորհիւ կուսակցութեան հետեւողական ճիգերուն, վերջապէս 1897-ին ժընեւի մէջ ստեղծուեցաւ Երիտասարդ Թուրքերու յեղափոխական առաջին կոմիտէն: Իր յայտարարութիւնը, հազարաւոր օրինակներով տպուած, մեր կազմակերպութիւններու միջոցաւ բաժնուեցաւ Թուրքիոյ, ինչպէս նաեւ Պարսկաստանի մահմետականներուն: Միեւնոյն ժամանակ, ձեռնարկուեցաւ համատեղ գործունէութեան մը Կոստանդնուպոլսոյ մէջ:

Մեր կապերը Երիտ. թուրքերուն հետ աւելի սերտացան՝ Տամատ Մահմուտ փաշայի, իր որդիներուն եւ աւելի ազատական ու յեղափոխական ձգտումներ ունեցող այլ գաղթականներու ժընեւ եւ Փարիզ հասնելէն ետք: Երիտ. թուրքերը կը գրէին մեր պաշտօնաթերթին մէջ, միասնականութեան տեսակէտներ գարգացնելով: Կը հրատարակէին պրոչիւրներ եւ յայտարարութիւններ, զորս մեծ քանակութեամբ կը ցրուէինք մեր շրջաններուն մէջ:

Միեւնոյն ատեն, 1897-էն սկսեալ բանակցութիւններ սկսան երկրին ներսը թուրքերուն եւ քրիւտերուն հետ: Հետզհետէ գործի վերածուեցան անոնք: Խառն կոմիտէները թուրք լեզուով լրագիրներ եւ յայտարարութիւններ հրատարակեցին Վանի, Էրզրումի եւ Մուշի մէջ. այսպէս, քաղաքական եւ երկրագործական ղեկարար տարուած գործունէութիւնը կու գար քանդուելու դարաւոր աւանդութեանց պարտադրած արգելքները: Յոյց տալու համար տեղի ունեցած փոփոխութեանց կարեւորութիւնը, կը բաւէ յիշել որ միասնաբար կազմակերպուած 1906-ի Էրզրումի ըմբոստութեան ատեն, թուրք ղեկավարները թոյլ չտուին որ հայ ընկերները որեւէ մասնակցութիւն ունենան հրապարակային ցոյցերուն մէջ, եւ մեծ թիւով թուրքերու ձեռքակալութենէն ետք, եւ հակառակ բանտերու մէջ ի գործ դրուած սովորական չարչարաններուն, ո՛չ մէկ հայ մատնուեցաւ: Վանի մէջ քրիւտերու լայն օժանդակութեան շնորհիւ է որ 1907-ին մեր Կեդր. կոմիտէն յաջողեցաւ հազարաւոր հրացաններ եւ աւելի քան մէկ միլիոն փամփուռ

փոխադրել: Վանի եւ Մուշի նահանգներուն մէջ, քրիւստ գիւղացիները կամովին մեր կոմիտէներու պաշտպանութեան կ'ապաւինէին՝ պայքարելու համար աւատատէր պէյերու հարստահարութեանց դէմ: Երիտ. թուրքերու եւ հայ յեղափոխականներու 1902-ի առաջին համագումարը գործնական ոչ մէկ արդիւնք տուած էր՝ Ահմէտ Ռիզայի «Միութիւն եւ Յաւատարմութիւն» խմբակին յեղափոխական մարտավարութեան ընդգրկմանալու պատճառաւ: 1907 թ. Դեկտեմբերին Փարիզի երկրորդ համագումարը, որ կայացած էր մեր կուսակցութեան Ընդհ. ժողովի նախաձեռնութեամբ (Մարտ 1907), մեծ արձագանգ գտաւ թուրք առաջաւոր շրջանակներուն մէջ եւ, մեր տեսակէտով, հանդիսացաւ պսակումը 15 տարիներու մեր ջանքերուն: Այս համագումարին մէջ է որ բացայայտ համաձայնութիւն գոյացաւ Դաշնակցութեան եւ Երիտ. թուրքերու միջեւ՝ Ապտիւլ Համիտը տապալելու եւ Սահմանադրութիւնը վերահաստատելու նպատակով: Հո՛ն է որ բոլոր երիտասարդ թուրքերու կողմէ որդեգրուեցաւ յեղափոխական գործելակերպը եւ դժուեցաւ հասարակաց գործունէութեան մը ծրագիրը:

1908 թ. յեղափոխութիւնը, Կոստանդնուպոլսոյ եւ գաւառներուն մէջ անոր առաջացուցած ընդհանուր խանդավառութիւնը, անընդհատ տեղի ունեցող ցոյցերը, կրակոտ ճակերը, եղբայրակցութեան եւ միութեան ուղղութեամբ արձակուած կոչերը կարծես կ'աւետէին, ինչպէս կ'երեւակայէինք այն ատեն - նոր դարաշրջանի մը սկզբնաւորումը՝ թուրքիոյ եղբրական պատմութեան մէջ:

Կը թուէր, թէ Ռեշատներու, Միտհատներու եւ միւս բարեկարգիչներու յաջողութիւն չգտած գաղափարները, ի վերջոյ, յանձին 1908-ի Երիտ. թուրքերուն, գտած էին իրենց երջանիկ կենսագործողները: Կը թուէր, թէ ազատութեան հրովարտակները, այնքան հանդիսաւոր կերպով հռչակուած 1839-ին եւ 1856-ին եւ մեռեալ տառ մնացած, իրագործման ճամբուն վրայ են արդէն: Եւ իսկապէս, հաստատուեցան մամլոյ եւ խօսքի ազատութիւնը, ժողովուրդներու հաւասարութիւնը: Հայերու դէմ (իբրեւ յեղափոխականներու) արձակուած բոլոր հրամանները անմիջապէս ջնջուեցան: Քաղաքական բանտարկեալներն ու գաղթականները ներումի արժանացան եւ ընդունուեցան մեծ պատիւներով: Մեծ յարգանք ցոյց տրուեցաւ անոնց եւ միեւնոյն ժամանակ վստահութիւն՝ հանրային գործերը վարելու: Այս բոլորը բաւ էին ամրապնդելու այն յոյսը, որ նոր գաղափարները թափանցած էին զանգուածներուն մէջ, եւ որ թուրքիան այս անգամ կրնար շրջանցել պատմական տագնապը, գերծ մնալով յետադիմական նոր շարժումի մը ենթարկուելու վտանգէն:

Երիտ. թուրքերու կառավարութիւնը յանդգնեցաւ նոյնիսկ հայկական շրջաններէն վտարել նախկին վարչակարգի կողմէ բերուած մահմետականները, եւ հողերը վերադարձնել հայ սեփականատէրերուն, որոնք պարտադրուած՝ գաղթած էին Կովկաս, Պարսկաստան, Ամերիկա եւ այլուր:

Երիտասարդ թուրքիան կը շահէր ոչ միայն մեր համակրանքը, այլեւ վստահութիւնը որոշ պետութիւններու, որոնք նոյնիսկ կը խորհէին ջնջել քափթիթիւլախոնները եւ լայնօրէն օժանդակել նոր վարչակարգին վերջնական ամրապնդումին: Երիտ. թուրքերը մասնաւոր կարեւորութիւն կ'ընծայէին այս խնդրին, եւ եթէ Հետագային միւս ազգութիւններուն դէմ բացայայտ

ծայրայեղութիւններէ խուսափեցան, պատճառը այն էր որ չէին ուզեր կորսնցնել Եւրոպայի համակրանքը:

Յեղափոխութենէն առաջ, եւ օսմանեան սահմանադրութիւնը վերահաստատելու նպատակով՝ Հ. Յ. Դաշնակցութեան եւ Երիտ. թուրքերու համերաշխութիւնը - հակառակ երկու կազմակերպութեանց միջեւ գոյութիւն ունեցող տարակարծութեանց - անհրաժեշտ եղաւ շարունակել Սահմանադրութեան առաջին շրջանին եւս, որպէսզի ամրապնդուի նոր վարչակարգը եւ աւարտին հասցուի մեր շրջաններուն մէջ աւատատէրերու դէմ մղուած պայքարը. պայքար մը որ անհրաժեշտ էր երկու կուսակցութիւններուն համար հաւասարապէս: Այլապէս նաեւ, Երիտ. թուրքերու կոմիտէն միակն էր որ արմատ կը նետէր թուրք ժողովուրդի առաջաւոր խաւերուն մէջ:

Այսուհանդերձ, Երիտասարդ թուրքիոյ մեղրամիսը երկար չտեւեց, եւ մեր կուսակցութիւնը ունեցաւ բազմաթիւ յուսախաբութիւններ, հետզհետէ աւելի ու աւելի չարաղէտ:

Առաջինը տեղի ունեցաւ 1909 թ. Մարտ 31-ին, Ապտիւլ Համիտի արբանեակներու յետադիմական հարուածէն ետք: Ճիշդ է որ շարժումը արագօրէն խեղդուեցաւ: Կոստանդնուպոլսոյ վերագրուեցաւ սահմանադրական բանակին կողմէ, եւ Ապտիւլ Համիտ գահընկէց եղաւ: Սակայն Երիտ. թուրքերու այս յաղթանակը սկիզբն եղաւ իրենց գաղափարական պարտութեան: Փոխանակ յետադիմութեան դէմ մարտնչելու - ի դին նոյնիսկ ժամանակաւորապէս իշխանութիւնը կորսնցնելու վտանգին - Երիտ. թուրքերը նախընտրեցին մեղմացնել իրենց պայքարը յետադիմականներուն հանդէպ: Եւ որովհետեւ վերջինները կը շահագործէին Շարիաթը՝ Երիտ. թուրքերը ներկայացնելով իբրեւ անաստուածներ, իբրեւ անհաւատներու գործիք, իբրեւ կեւաւոր, - «Նոր բարեկարգիչները» սկսան իրենք զիրենք ցոյց տալ որպէս մոլեռանդ իսլամներ եւ, հետեւաբար, թշնամի քրիստոնեաներուն:

Երիտ. թուրքերու Սեյանիկի համագումարը եկաւ փաստելու, որ հին թուրքերու քաղաքականութիւնը հետզհետէ աւելի գետին կը շահէր՝ Երիտասարդ թուրքիոյ դրօշին ներքեւ:

Այս համագումարին մէջ, սահմանադրական վարչակարգէն ետք թուրքիոյ մէջ ստեղծուած կացութիւնը քննութեան առնելով, Երիտ. թուրքերը մխիթարական չգտան զայն: Սակայն, փոխանակ անոր պատճառները իրենց իսկ հռչակած սկզբունքները՝ կենսագործելու անկարողութեանը մէջ փնտելուելու, - յանգեցան այն եզրակացութեան, որ այդ սկզբունքները յարմար չէին մահմետական զանգուածներու հոգեբանութեան, որ՝ անոնք հակառակ էին թուրքիոյ նման մահմետական եւ գերազանցօրէն թուրք պետութեան մը շահերուն: Այս ձեւով, իրենք իսկ խախտեցին հիմերը՝ Օսմանիզմին, որուն անունով Երիտ. թուրքերը կը հալածէին տարբեր ազգութեանց անջատողական շարժումները. եւ Օսմանիզմի սկզբունքը, որ նախա-յեղափոխական շրջանի Երիտ. թուրքերու մտայնացումով պէտք է նշանակէր Օսմանեան կայսրութեան բոլոր հպատակներուն հաւասարութիւնը՝ առանց ցեղի եւ կրօնի խտրութեան, կը դադրէր քիչ անց համապատասխան ըլլալէ կոմիտէի տեսակէտներուն: Մահմետականներու եւ ի մասնաւոր թուրքերու կողմէ սխալ ըմբռնուած շահերու վրայ հիմնուած, Երիտ. թուրքերը վճռականօրէն դէմ

արտայայտուեցան ազգութեանց իրական հաւասարութեան, նկատի ունենալով որ հաւասար պայմանները՝ կը նպաստեն քրիստոնեաներու տնտեսական եւ մշակութային զարգացումին, ի վնաս իշխող ցեղի [շահերուն]:

Այս համագումարին մէջ, այլեւայլ միջոցառումներու կողքին, որոշուեցաւ մասմետականներով, մասնաւորապէս թուրքերով բնակեցնել այն շրջանները, ուր քրիստոնեայ տարրերը այս կամ այն չափով հոծ դանդուածով կը գտնուէին: Համագումարը երեւութապէս միայն նոր էր: Ան կը բանաձեւէ ու շօշափելի իրողութեան կը վերածէ այն ինչ՝ որ երկար ատենէ ի վեր կ'ոգեւորէր թուրք ղեկավարներուն մտայնութիւնը:

Մինչեւ իսկ ալպանացիներու (մեծամասնութեամբ մասմետական), արաբներու, սուրիացիներու շարժումները, որոնք հետեւանք էին ազգայնական այդ նեղմիտ քաղաքականութեան, չյաջողեցան ետ կեցնել Երիտ. թուրք ղեկավարները իրենց բռնած աղէտալի ուղիէն:

Թուրքերու շահերը հետապնդելով, անոնք քանդեցին թուրքիան:

Երիտ. թուրքերը կ'ուրանային միշտ վերել յիշուած որոշումներու որդեգրումը. դէպքերը շատ չուշացան քօղազերծելու համար իրականութիւնը: Թուրք կառավարութիւնը սկսաւ մասմետականներ տեղաւորել Մակեդոնիա եւ հայկական նահանգներ: Դարերցուց հին վարչակարգի օրերուն հայերէն խլուած հողերուն վերադարձը, եւ վերստին պաշտպան կանգնեցաւ քրեւտ պէյերուն:

Երիտ. թուրքերու շրջադարձին դէմ եղած շարք մը ապարդիւն բողոքներէ ետք, 1912 թ. Մայիս ամսուն Հ. Յ. Դաշնակցութիւնը, հիմնուելով 1911 թ. կուսակցութեան Ընդհ. ժողովի որոշման վրայ, անհրաժեշտ գտաւ խզել Երիտ. թուրքերու կոմիտէին հետ կայացած համերաշխութիւնը՝ մանրամասն Յուշագրով մը իր պատճառաբանութիւնները թուելով:

Միեւնոյն քաղաքականութիւնը սկսաւ գործադրուել Մակեդոնիոյ մէջ եւ առաջացուց մակեդոնացիներու բուռն բողոքները: Չեթայական գունդերը վերսկսան իրենց գործունէութեան: Թուրքիոյ կողմնակից տարրերը, որոնք հակառակ էին պալքանեան պետութիւններու միջամտութեան, վերստին նետուեցան պուլկար կառավարութեան գիրկը: Թշնամութիւնները՝ առաջ բերին Իշտիպի, Քոչանայի մահափորձերը, քրիստոնեաներու վրայ ի գործ դրուած ջարդերը, մինչեւ իսկ պալքանեան պատերազմն ու թուրքիոյ սարսափելի քայքայումը:

Կարելի էր խորհիլ, որ Մակեդոնիոյ մէջ ի գործ դրուած հին – ու միշտ նոր – քաղաքականութեան աղէտալի հետեւանքները որոշ ազդեցութիւն կ'ունենան Երիտ. թուրքերուն վրայ եւ կը շեղեցնեն զանոնք վտանգալի արկածախնդրութենէ: Պահ մը Երիտ. թուրք բանբերներու լեզուն փոխուեցաւ: Պալքանեան պատերազմէն ետք, ուրիշ քաղաքականութիւն մը ծնունդ առաւ Թուրքիոյ իսկական հայրենիք՝ Փոքր Ասիոյ մէջ շատ կարճատեւ շրջանի մը համար: Պալքանեան երկրորդ պատերազմի փոքր յաջողութենէն ետք, կրկին մոռացութեան տրուեցան բոլոր գեղեցիկ խօսքերը: Պալքանեան աղէտէն ետք, Երիտ. թուրքերը աւելի հեռու գացին, մինչեւ հուշակաւոր սուլթան Սելիմի պատմական դարձած տարագրի որդեգրումը:

Գիտենք որ այս Խալիֆան, որ անխռով իշխելու համար՝ սպաննեց իր բոլոր եղբայրները, – եւ այդ մէ-

կը օրէնք դարձաւ իր յաջորդներուն – վճռեց նոյնպէս միանգամընդմիշտ կոտորել քրիստոնեայ իր բոլոր հպատակները, կամ իսլամացնել զանոնք, որպէսզի ապահովէ մասմետականներու ապագան: «Թուրքիան՝ թուրքերուն», այդ էր նշանաբանը, արձակուած Ժ.Ձ. դարու թուրք բարեկարգիչին կողմէ:

Սուլթան Ապտիւլ Համիտ՝ ծայրայեղ զգուշաւորութեամբ բայց եւ զերազանց վարպետութեամբ՝ հանդիսացաւ այդ նշանաբանը գործի վերածողը: Դանդաղ բայց եւ անօրինակ հարստահարութիւններու միջոցաւ, ան կ'ամայացնէր Հայաստանը, միաժամանակ սատարելով քրեւտներու եւ մասմետական գաղթականներու հայկական հողեր ներխուժելուն: Իսկ ջարդերու հրահանգ կ'արձակէր միայն այն ատեն, երբ կը ստանար շահագրգիռ պետութեանց հաւանութիւնը:

Իր ծրագրի գործադրութեան ընթացքին գահընկէց դարձած Ապտիւլ Համիտ, քիչ անց, կը տեսնէր արդէն իր սկսած գործին վերանորոգումը Եւրոպական պատերազմի նախօրէին, Փոքր Ասիոյ յոյներուն տարագրումը ընթացքի մէջ էր (ըստ Երիտ. թուրքերուն տարագրեալներու թիւը 150.000-է աւելի էր): Գալով հայերուն, անոնք կը բաւականանային այդ ժամանակ միայն ակնարկութիւններ ընելով այդ մասին:

Պատերազմի յայտարարութենէն ետք, Երիտ. թուրքերու պաշտօնաթերթ «Թանին» բացորոշ կերպով կը յայտարարէր, որ սուլթան Սելիմի նշանաբանը ամբողջութեամբ պիտի գործադրուի հայերուն վրայ:

Ինչ որ իրագործուեցաւ 1915-ին:

Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ պատերազմը

Թուրքիոյ մէջ Սահմանադրական վարչակարգի հաստատումէն ետք, այս վերջինին վարած քաղաքականութիւնը միջազգային նոր գրգռութիւններ պատճառեց: Հ. Յ. Դաշնակցութիւնը, հաւատարիմ իր աւանդութիւններուն, միշտ հակառակ եղաւ խնդիրները գէնքի ուժով լուծելու միջոցին:

Թուրքիոյ դէմ Իտալիոյ կողմէ պատերազմի յայտարարութենէն անմիջապէս ետք (1911-1912), կուսակցութիւնը բողոքի հեռագիր մը ուղարկեց Հոռոմ եւ ուղերձ մը՝ Ընկերվար Միջազգայինի գրասենեակին: Աւելի ուշ, իմանալով որ հաւաք մը կը կազմակերպուի Վիեննայի մէջ, ան փութաց պատգամաւոր մը առաքել, որպէսզի իր ձայնը միացնէ Աւստրիոյ ընկերվար կուսակցութեան տարբեր հատուածներուն պատկանող ընկերներու բողոքին:

Աւելի ուշ եւս, պալքանեան պատերազմի նախօրէին, ի տես Թուրքիոյ եւ պալքանեան պետութեանց յարաբերութիւններու ծայր աստիճան սրումին, որ հետեւանք էր Իշտիպի եւ Քոչանայի արիւնալի դէպքերուն, մեր կուսակցութիւնը, Երիտ. թուրք կառավարութեան բարբարոսական արարքներուն դէմ իր բողոքը արտայայտելով եւ Մակեդոնիոյ մէջ արմատական միջոցառումներու գործադրութիւնը անհրաժեշտութիւն նկատելով հանդերձ, բուռն բողոք բարձրացուց պատերազմելու գաղափարին դէմ: Խնդրի լուծման համար, կուսակցութիւնը կը յանձնարարէր ստեղծումը պալքանեան համադաշնակցութեան, որուն մաս պէտք է կազմէր ինքնավար Մակեդոնիան: Այլապէս նաեւ, պալքանեան երկիրներու ընկերվար կուսակցութիւններու հետ ստորագրեց նոյնիմաստ յայտարարութիւն մը:

Պալքանեան երկրորդ պատերազմէն ետք, որ աւելի եւս ծանրացուցած էր Պալքանեան կացութիւնը, մեծ պետութեանց միջեւ ծագելիք պատերազմ մը կանխատեսելով՝ կուսակցութիւնը 1913 թ. Օգոստոսին էրզրումի մէջ գումարուած Ընդհ. ժողովին հետեւեալ որոշումը կայացուց.-

«Նկատի ունենալով որ հայ ժողովուրդի անդամահատութիւնը արդիւնք է մրցակից պետութիւններու կայսերապաշտական եւ արկածախնդրական քաղաքականութեան, որմէ կը տուժեն թէ տնտեսապէս եւ թէ բարոյապէս հաւասարաբար՝ պարտեալներն ու յաղթողները,

«Որ ապագային, պատերազմի պարագային անխուսափելիօրէն պիտի պարտադրուին ֆիզիքական, նիւթական եւ բարոյական հսկայ զոհողութիւններ, պատերազմող երկիրներու սահմաններուն փոփոխութիւնը չի կրնար երաշխաւորել հայ աշխատաւորներու մարդկային, ազգային ու տնտեսական շահերը.

«Ժողովը կ'որոշէ.

«Որ քաղաքական խառնակ կացութիւն ստեղծուելու պարագային, պիտի ընէ կարելին՝ օրինական միջոցներով եւ համաձայնաբար ընկերվար այլ կուսակցութիւններու, որպէսզի կանխարգելուի համայնաջինջ պատերազմը:

«Նկատի ունենալով նոյնպէս, որ կուսակցութեան իւրաքանչիւր անդամ, որ իբրեւ հպատակ իր ապրած երկրին իրաւունքները վայելելով մէկտեղ, ունի նաեւ պարտաւորութիւններ,

«Ժողովուրդը կ'որոշէ.

«Պատերազմի պարագային, կուսակցութեան իւրաքանչիւր անդամ պէտք է իր քաղաքացիական պարտականութիւնը կատարէ համապատասխան պետութեան հանդէպ»:

1914 թ. Յուլիս 10-14-ին էրզրումի մէջ գումարուած յաջորդ Ընդհ. ժողովին, որ կը գուգադիպէր եւրոպական պատերազմի յայտարարութեան եւ Թուրքիոյ մէջ անմիջական կերպով անոր յաջորդող զօրակոչին, - 1913 թ.-ի որոշումները վերահաստատուեցան: Յատկապէս ընդգծուեցաւ, որ Թուրքիան պէտք է խիստ կերպով չէզոքութիւն պահէ եւրոպական պատերազմին մէջ:

Երիտ. Թուրքերու կոմիտէն եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը պատերազմի նախօրեակին

Հ.Յ. Դաշնակցութեան Ընդհ. ժողովին աշխատանքները նոր աւարտած էին, երբ Կոստանդնուպոլսէն ժամանեցին Երիտ. թուրքերու կոմիտէին պատուիրակները՝ Նաճի պէյ, Հիլմի պէյ եւ Պեհաէտտին պէյ: Առաջին երկուքը կը պատկանէին Երիտ. թուրքերու յեղափոխական հին խմբակին, որուն հետ միշտ կը շարունակէինք առաւել կամ նուազ սերտ յարաբերութիւններ ունենալ:

Պատուիրակները խոր ցաւ յայտնեցին, որ չէին կրցած աւելի կանուխ գալ, Ընդհ. ժողովի փակումէն առաջ կուսակցութեան հետ բանակցութիւններ ունենալու համար: Որոշած ըլլալով Ռուսիոյ դէմ պատերազմ յայտարարել, կոմիտէն [Երիտ. թուրքերու] կ'ուզէր

իմանալ հայկ. կուսակցութեան դիրքորոշումը: Կանխարգելիչ միջոցներ ձեռք առնուած էին արդէն՝ Կովկասի մէջ թուրքական բանակի գործողութիւնները դիւրացնելու նպատակով: Հայկ. կուսակցութեան միացումը զգալապէս պիտի նպաստէր թուրքական յաջողութիւններուն: Պատգամաւորները թուեցին այն բոլոր առաւելութիւնները Թուրքիոյ համար, որ պատերազմէն դուրս պիտի դար ընդարձակուած, հզօրացած, ներքնապէս ու արտաքնապէս ամրապնդուած: Իբրեւ վարձատրութիւն, կը խոստանային Թուրքահայաստանի ինքնավարութիւնը պատերազմէն ետք:

Դաշնակցութեան ներկայացուցիչները, հիմնուելով Ընդհ. ժողովի որոշումներուն վրայ, պատասխանեցին որ չէին կրնար համաձայնիլ Երիտ. թուրքերու կոմիտէի առաջարկներուն: Բացի ընդհանուր կարգի պատճառներէն, կուսակցութիւնը դէմ էր թուրք կառավարութեան մասնակցութեան ընդհանուր պատերազմին, որովհետեւ հաստատ կերպով համոզուած էր որ նման փորձ պիտի առաջացնէր Թուրքիոյ քայքայումը, եւ անոր աւերակներուն տակ կործանումը հայ ժողովուրդին: Կուսակցութիւնը կողմնակից էր Թուրքիոյ բացարձակ չէզոքութեան. բայց պատերազմի պարագային, Դաշնակցութիւնը, իբրեւ կուսակցութիւն չէզոք մնալով հանդերձ, պիտի յանձնարարէր Թուրքիոյ, Ռուսիոյ եւ Պարսկաստանի իր անդամներուն, որ իրենց պարտականութիւնը կատարեն համապատասխան պետութիւններուն հանդէպ:

Այս կարգի տեսակէտներու փոխանակումներ տեղի ունեցան նաեւ հետագայի հանդիպումներուն ընթացքին: Նաճի եւ Հիլմի պէյերու վան մեկնումէն ետք, բանակցութիւնները վերսկսան վանի մեր Կեդր. կոմիտէին հետ: Արդիւնքները նոյնն էին, հակառակ Նաճի պէյի այն խոստումին, որ Դաշնակցութեան մասնակցութեան պարագային Ռուսահայաստանը պիտի կցուէր ինքնավար Թուրքահայաստանին:

Այսուհանդերձ, պատերազմական պատրաստութիւնները՝ գերմանացիներու ղեկավարութեամբ՝ կը շարունակուէին արտասովոր եռանդով: Երիտ. թուրքերը կը շահագործէին գերմանական իւրաքանչիւր յաջողութիւն՝ գրգռելու համար թուրք ժողովուրդը, որ [այսուհանդերձ] կը մնար անտարբեր: Սակայն Մառնի պարտութեանէն եւ Կալիսիոյ մէջ ռուսական յաղթական առաջխաղացքէն ետք, Երիտ. թուրքերու մեծ մասը սկսաւ տատանուիլ: Յամենայնդէպս, թուրքերը կողմնակից չէին երեւեր անմիջական յարձակողականի մը. կը նախընտրէին սպասել դէպքերու ընթացքին: Մեր քարոզչութիւնը ի նպաստ չէզոքութեան՝ նպաստաւոր գետին կը շահէր ամէն տեղ:

Երեք ամիսներ տեւող նախապատրաստութիւններէ եւ տատանումներէ ետք, [Երիտ. թուրք.] կոմիտէի ղեկավարները ցնորքները յաղթանակեցին.-

- Ըմբոստացումը մահմետական երկիրներուն՝ Պարսկաստան, Հնդկաստան, Եգիպտոս եւայլն.
- Դիւրին յաղթանակ Ռուսիոյ վրայ, որ ամբողջովին կլանուած էր Գերմանիոյ եւ Աւստրիոյ դէմ պատերազմով.
- Նուաճումը Կովկասի եւ Թուրքաստանի.
- Բնաջնջումը՝ մահմետական զանգուածներու մէջ կղզիացած քրիստոնեայ տարրերուն.
- Ստեղծումը այս ձեւով - Կոստանդնուպոլիս հաստատուած Խալիֆայի մականին ներքեւ - մահմետա-

կան միաձոյլ աշխարհի մը, որ պիտի տարածուէր Սեւ ծովէն մինչեւ Հնդկաստան.

- Ասիոյ մէջ գերակշիռ դիրքը Թուրքիոյ, թիկունքին ունենալով Եւրոպայի մէջ գերիշխանութիւն ձեռք բերած Գերմանիան.

- Մէկ քառորդ մասը, առնուազն 20 միլիոն, զոր պիտի ստանար Թուրքիան որպէս աւարի բաժին իր պատերազմի մասնակցութեան փոխարէն:

Ահա այն շոգշողուն հրապոյրը, որուն չկրցան դիմադրել Երիտ. Թուրքիոյ վարիչները:

Եթէ բաղդատենք տիեզերական բնոյթի այս երազները եւ ցարդ ձեռք բերուած արդիւնքները, կարելի է հաստատել որ այդքան կորուստներէ ետք, Երիտ. Թուրքերը պարծենալու ոչինչ ունին, բացի հայերը, յոյները, սուրիացիները եւ քաղաքացիները ջարդած ըլլալէ:

Երիտ. Թուրքերը եւ ջարդերը

Երիտ. Թուրքերը չեն ուրանար այլեւս հայոց տեղահանութիւններն ու ջարդերը: Կ'արդարացնեն զանոնք: Գլխաւոր պատճառը պէտք է նկատել հայոց ըմբոստութիւնը. բանակի կողքին կարելի էր հանդուրժել ապստամբ վիճակի մէջ գտնուող ժողովուրդ մը: Երիտ Թուրքերը կը վկայակոչեն Վանի, Շապին Գարահիսարի, Ուրֆայի եւ այլ շարժումները:

Հարկ կ'ա՞յ ըսելու թէ հայերուն վերագրուած դէպքերը Թուրքերը իրենք յառաջացուցին: Կարծեցեալ այդ «ըմբոստութիւնները» պարզապէս ինքնապաշտպանութեան փորձեր էին, կատարուած – Վանի, Շատախի, Սուէտիոյ եւ Կիլիկիոյ մէջ – տեղահանութեանց եւ կոտորածներու իսկ ընթացքին, եւ այն ալ յաջողելու տկար յոյսով մը: Անոնք յուսահատական փորձերն էին ժողովուրդի մը, որ կը նախընտրէր մեռնիլ զէն ի ձեռքին, քան սպաննուիլ եւ կամ ենթարկուիլ յաղթող կողմի անասնական բնազդներուն:

Խօսած ենք արդէն Թուրքիոյ քրիստոնեաներուն եւ ի մասնաւորի հայերուն նկատմամբ Երիտ. Թուրքերուն հետեւած ընդհանուր մարտավարութեան մասին: Տեսանք որ Հայաստանի հայերուն բնաջնջումին համար անոնք կը սպասէին պատեհ առիթին, եւ որ եւրոպական պատերազմը իրենց տեսակէտով կը ներկայացնէր արդարեւ երկար ատենէ ի վեր սպասուած պատմական այդ պահը:

Հայերը ամբաստանել ապստամբութեան մեղքով, այս պարագային, կը նշանակէ կրկնել գայլին ու գառան [ծանօթ] առակը:

Լաւագոյնս լուսաբանելու համար Երիտ. Թուրքերու վարմունքը, պիտի թուենք այն միջոցները որ ձեռք առնուեցան հայերու նկատմամբ եւրոպական պատերազմի առաջին օրերէն սկսեալ: Այդ արարքներու համակարգումը յստակօրէն կը փաստէ որ Երիտ. Թուրքերու ծրագիրը գոյուցութիւն ունէր ոչ միայն իբր տեսութիւն, որ գործադրութեան պիտի դրուէր Վանի կամ Ուրֆայի դէպքերուն առիթով, այլ որ հայ ժողովուրդին դէմ դաւ կը նիւթուէր ռուս-թրքական պատերազմէն շատ առաջ, այն ժամանակներէն, երբ Թուրքիոյ նկատմամբ հայոց անհաւատարմութեան ո՛չ իսկ մէկ արարք» կարելի է յիշատակել:

1. Ոստիկան զօրքերը.- Զօրակոչի յայտարարութենէն ետք մանաւանդ, Հայկական նահանգները ողողուեցան ժանտարմներով եւ գաղտնի ոստիկաններու

խնամքով ընտրուած եւրոպական Թուրքիոյ նահանգներէն բերուած տարրերէն, այդ նահանգներու կորուստէն ետք: Անոնց հետ միասին երեւցան նոյն կարգի շատ մը պաշտօնեաներ: Սոսկալիօրէն պարտուած պուլկարներէն, սերպերէն եւ յոյներէն, նուստացած իրենց երբեմնի հպատակներու աչքին, անկարողութեան մատնուած անոնց առջեւ,- քրիստոնեայ ժողովուրդներուն զոհերը նկատուող այս մարդիկը, բնականաբար, պիտի ջանային վրէժ լուծել իրենց տիրապետութեան տակ գտնուող ուրիշ քրիստոնեայ հպատակէ: Քաղաքական նկատումներով՝ հայերը լաւագոյն առարկան հանդիսացան իրենց վրէժխնդրութեան համար:

2. «Չեթաները».- Զօրակոչէն անմիջապէս ետք, այսինքն երեք ամիս առաջ ռուսեւթուրք պատերազմէն եւ նախքան 9 ամիս հայկական առաջին «ըմբոստութեանէն», բոլոր յանցագործներն ու ոճրագործները ազատ արձակուեցան. անոնցմէ կազմուեցան «չեթա» կոչուած ջոկատները (պուլկարերէն՝ խումբ), որոնց միացուեցան երկրին մէջ քաջածանօթ բոլոր մարդասպաններն ու աւագակները: Հրամանատարութիւնը վստահուեցաւ ամէնէն արիւնարբուներուն՝ ընդհանուր ղեկավարութեամբ Երիտ. Թուրքիոյ ամէնէն ազդեցիկ անդամներուն:

Այս ջոկատներուն «չեթա» անուանակոչումը ինքնին խիստանշանական էր: Եւ որովհետեւ Թուրքերը կը գանգատէին պուլկար «չեթա»ներու դէմ՝ զանոնք մեղադրելով մահմետական ժողովուրդի դէմ գործուած ամէն կարգի վայրագութեանց համար, դժուար էր, հետեւաբար, նախատեսել թէ ի՞նչ դեր վերապահուած էր անոնց հայկական նահանգներուն մէջ:

Իրապէս ալ մենք տեսանք, որ բոլոր բռնաբարուումներու եւ կոտորածներու պարագային, «ամէնէն փայլուն» բաժինը վերապահուած էր մասնաւորաբար «չեթա»ներուն:

3. Մահմետական քաղաքագործ.- Չեթայական ջոկատներուն գուգահեռաբար, քաղաքներու եւ գիւղերու մէջ տեղի կ'ունենար մահմետական բնակչութեան զինումը: Ոստիկանական գործակալներն ու [Երիտ. Թուրք] կոմիտէի անդամները, զօրակոչի առաջին օրերէն, առատօրէն հրացաններ ու զինամթերք կը բաժնէին: Հայոց մտահոգութեան ի պատասխան, Թուրքերը կ'ըսէին, թէ կը ստեղծէին «ազգային աշխարհագոր», որ պիտի հսկէր երկրի ապահովութեան, ու նաեւ կուէր արտաքին թշնամիին դէմ: Այսուհանդերձ, ազգային այս կազմակերպութեան մէջ մէկ քրիստոնեայ իսկ չէր մտածուեր ընդունիլ: Հասկնալի է որ քրիստոնեայ տարրին բացառումը աշխարհագորային այս կազմաւորումէն կը բաւէր՝ նշմարելու համար այս միջոցառման իսկական բնոյթը եւ ակներեւ դարձնելու, «Հայկական ըմբոստութիւններէն» շատ առաջ, Երիտ. Թուրքերու իսկական մտայնութիւնը: Ասիկա բացայայտ ցուցադրութիւն մըն էր նաեւ թէ՛ Թուրք եւ թէ՛ հայ ժողովուրդին համար Ապտիւլ Համիտի օրերուն վերադարձի մասին:

Աշխարհագորայինները արտաքին թշնամիին անհանգստացնելու առիթը չունեցան անշուշտ: Սակայն իրենց պարտականութիւնը լիուրի կատարեցին «ներքին թշնամի»ին նկատմամբ, դարանակալ սպասելով տարագրեալներու կարաւաններուն, բռնաբարելով մայրերն ու խեղդելով ծծկեր մանուկները:

4. Խօսիլ հայկական ջարդերու մասին՝ կը նշանակէ մտաբերել քիւրտերը: 1894 թ. «Համիտի գուռներ»

ըր» ստեղծելով, Ապտիլ Լամիտի թիրախը հայերն էին: Սահմանադրութեանն էլ չէր, այսուհանդերձ, քիւրտերը հանդիսացան ամէնէն անհաւատարիմ տարրը շրջաններուն մէջ:

Քիւրտ ցեղապետները, երբեմն իրենց մարդոցմով, կը քաշուէին Պարսկաստան, բանակցութիւններ կը վարէին ցարի կառավարութեան գործակալներուն հետ, եւ անոնց կողմէ զինուած, կը խռովէին երկիրը: Պատերազմի նախօրէին, կազմակերպուեցաւ իսկական ապստամբութիւն մը: Եթէ անհաւատարիմ տարր մը կար թուրք-իոյ մէջ, արդարեւ քիւրտերն էին: Սակայն, Հակառակ ապստամբութեան, Իսլամի գերագոյն շահերուն համար անհրաժեշտ էր հաշտուիլ մահմետականներուն հետ:

Երիտ. թուրքիոյ ամէնէն երեւելի զեկավարներէն, ներառեալ օսմանեան երեսփոխաններէն Մէյֆուլլա-ւա Տիլիասի եւ ուրիշներու, կազմուեցան պատուիրակութիւններ եւ անոնց վստահուեցաւ այդ առաքելութիւնը: Մեկնեցան անոնք ի ձեռին ունենալով [Երիտ. թուրք] կոմիտէին կազմած ծրագիրները: Հաշտութիւնը իրագործելու համար, պէտք էր խոստումներով հրապուրել քիւրտերը: Անոնց շնորհուեցաւ հայերու դէմ ազատորէն գործելու եւ, կոտորածներէն ու տեղահանութենէն ետք, հայերու հողերուն ու ինչքերուն տիրանալու իրաւունքը:

Կանգ պիտի չառնենք քիւրտ ցեղերու խաղացած դերի նկարագրութեան վրայ: Այդ մէկը շատ ծանօթ է:

5. «Քասսապ թապուրի»:- Քիչ մը աւելի ուշ, կազմակերպուեցան ընտրանիներէ բաղկացեալ ջոկատները,- «Քասսապ թապուրի» (մտազործներու ջոկատներ), [Երիտ. թուրք] կոմիտէի զինուորականներու հրամանատարութեամբ: Այս ջոկատները գործեցին որպէս իսկական մտազործներ, մանաւանդ Մշոյ դաշտին մէջ, ուր 100.000 հայեր բնաջնջուեցան:

Երիտ. թուրքերը ձեռնարկեցին նաեւ շարք մը յարձակումներու, որոնք հետզհետէ խստանալով հասան աղէտալի չափերու:-

ա.- Զերբակալութիւններ.- Ճղճիմ պատրուակներով սկսան ձերբակալել աչքի գարնող անձնաւորութիւններ: Երբ կը փաստուէր կալանաւորներուն վերագրուած մեղադրանքներուն՝ ոչնչութիւնը, Երիտ. թուրքերը չէին վարաներ ամբաստանելու գանոնք Դաշնակիցներու օգտին լրտեսելու յանցանքով: Արեւելեան նահանգներու մէջ անոնք կը դառնային ուսուցչու լրտես, Կիլիկիոյ մէջ՝ անգլիացիներու լրտես:

Իբրեւ այդպիսին ալ կը վարուէին անոնց հետ:

Անոնցմէ ոմանք չարչարանքներու տակ մահացան: Զէյթունի երեւելիներէն եւ հերոսներէն՝ Նազարէթ Չաուուշ առաջին զոհերէն մէկը եղաւ:

բ.- Խուզարկութիւններ.- Երիտ. թուրքերու ծրագիրը կը պահանջէր որ բացի լրտեսներէն, ըլլային ապստամբներ, զինապահստներ, ուսմբեր եւ պայթելով վրայ գտնուող ապստամբական ուրիշ փաստեր: Երեւակայական պահստներ երեւան հանելու նպատակով կատարուած խուզարկութիւնները, քաղաքներու թէ գիւղերու մէջ, գարմանք պատճառեցին ամբողջ բնակչութեան: Գիւղը պաշարելէ ետք, տղամարդիկը կը բաժնէին կիներէն եւ մանուկներէն, որպէսզի երկու խմբակները անջատաբար «հարցաքննեն»: Խուզարկութիւնները կը կատարուէին Ռումելիի եւ Մակեդոնիոյ ժամտարմներուն կողմէ, «չեթա»ներու ներկայութեան: Հայերու բողոքներուն՝ «բարեկամ» թուրքեր կը պատասխանէ-

ին որ «չեթա»ներու մասնակցութիւնը դիպուածով է: Խուզարկութիւններ տեղի կ'ունենան հայոց թշնամիներու մատուցութեամբ: Անգամ մը որ, մանրակրկիտ խուզարկութիւններէն ետք, փաստուի թէ սուտ են՝ ուսուցարկութեան գործակալներուն կողմէ փոխադրուած զինապահստներու մասին շրջան ընող զրոյցները, վերջնական կերպով յայտնի պիտի դառնայ հայոց հաւատարմութիւնը, եւ պիտի դադրին իրենց հանդէպ առնուած բոլոր արտակարգ միջոցառումները:

Խուզարկութիւնները ուսական աղբիւրէ եկած ոչ մէկ զէնք ի յայտ բերին: Գտնուածները «կրա» սիստեմի քանի մը հրացաններ էին, որոնց գոյութիւնը նախօրոք ալ յայտնի էր,- գնուած էին անոնք Երիտ. թուրքերէն սահմանադրական ազատութեան առաջին տարիներուն: Ասով մէկտեղ, ձերբակալուած հայերը մեծ աղմուկով տարուեցան ու բանտ նետուեցան, որովհետեւ ի գին ամէն բանի պէտք էր ապստամբներ ունենալ:

գ.- Բռնագրաւումներ.- Ոչ մէկ բան այնքան ազդու եղաւ հայ զանգուածները ծայր աստիճանի յուսահատութեան մղելու, որքան բռնագրաւումներու դրութիւնը, որդեգրուած զօրակոչի յայտարարութենէն անմիջապէս ետք:

Գրութիւնը անտանելի կը դառնար մանաւանդ գիւղերուն մէջ: Գրեթէ բացառաբար հայ տուներու մէջ հաստատուած զօրքերը ամէն ինչ կը վերցնէին ձրիօրէն.- հաց, ցորեն, յարդ, ձիեր, սայլեր, կարագ, պանիր, ճերմակեղէն: Կ'առնէին աւելի քան պէտք ունէին: Այս եւս լաւ առիթ ծառայեց չինայելու համար ընտանեկան պատիւին: Գանգատներն ու աղերսանքները ետ մղուեցան արհամարհանքով: Բռնագրաւումները կը կատարուէին ոչ միայն զօրքին կողմէ այլ նաեւ, աւելի դաժանօրէն, ժանտարմներու եւ «չեթա»ներու կողմէ: Եղածը վատագոյն էր քան տրակոննատները:(4)

դ.- Պահեստի զինուոր առանց զէնքի.- Զօրակոչի ժամանակ [բանակ] կանչեցին 20-43 տարեքի բոլոր քրիստոնեաները (աւելի ուշ 18-48 տարու): Անոնք, որոնք 27 տարեկանէն վեր էին պէտք է ազատ ձգուէին, որովհետեւ քրիստոնեաներու զինուորական ծառայութիւնը սկիզբ առաւ Սահմանադրութեան հռչակումէն ետք:

«Բարեկամ» թուրքերը այս ապօրինութիւնը կը բացատրէին՝ թէ հայերու օգտին է. «Որքան շատ ըլլան բանակ կանչուած հայերը, կ'ըսէին անոնք, այնքան աւելի ապահովութիւն կ'ըլլայ հայոց ազգին եւ նուազ՝ կոտորածի վտանգը»:

Այսուհանդերձ, բանակ կանչուած հայ պահեստիները բնաւ զէնք չստացան: Զրկուեցան մինչեւ իսկ ատրճանակ կամ դանակ կրելու իրաւունքէն, եւ զրկուեցան հող փորելու, ճամբաներու շինութեան ու նորոգութեան աշխատանքներուն:

Ասիկա ճարտար հնարք մըն էր ժողովուրդէն խլելու բոլոր զօրեղ տղամարդիկը, որոնք վտանգի պարագային ի վիճակի կրնային ըլլալ դիմադրելու:

Անոնք պիտի պահուէին որպէս պատանդ՝ ջարդերը գործադրողներու տրամադրութեան ներքեւ:

ե.- Զինուորներու զինաթափումը.- Աւելին. սկսան զինաթափ ընել բանակի հայ զինուորները եւ գանոնք յատկացնել միեւնոյն աշխատանքներուն:

Զինաթափութիւնը այն ատեն մեծ համեմատութիւններու չհասաւ, շնորհիւ բարձրաստիճան կարգ մը զինուորականներու, որոնք կը գնահատէին հայ զինուոր-

ըին յատկութիւնները: Սակայն առաջին քարը նետուած էր: Երիտ. թուրքերու իսկական նպատակները իրենց ուղղակի ազդեցութիւնը գործեցին գինուորական շրջանակներուն վրայ ճիշդ այն պահուն, երբ ոչ ոք կը մտածէր ըմբոստացումի մասին: Հայերը որակուեցան կասկածելի, դաւաճան: Կարելի էր եւ, հետեւաբար, պէտք էր չարաչար վարուիլ անոնց հետ, ենթարկել զանոնք ամէն կարգի նախատինքի, մինչեւ իսկ բոլորը օրէնքէ դուրս հռչակել: Գաղափար մը տալու համար ստեղծուած մթնոլորտի մասին, կը բաւէ յիշել որ պատերազմի առաջին օրերուն Եղան գիւղին մէջ (Բասենի դաշտ) 60 հայ գինուորներ մերկացուելով, սպաննուեցան եւ կտոր-կտոր եղան իրենց գէնքի ընկերներուն կողմէ:

Երիտ. թուրքերը անտանելի պայմաններ կը ստեղծէին ու կ'ուզէին որ դասալիքներ չըլլան հայ գինուորներու շարքերուն մէջ:

Դասալքման այս պարագաները,– այլապէս նուազ յաճախաբէպ քան մահմետականներու մօտ, Երիտ. թուրքերու ձեռքը գէնք էր հայ ժողովուրդը ամբաստանելու համար:

Գ.– Կոռը (բռնի աշխատանք).– Զինուորական ծառայութեան գերծ մնացած տղամարդոց պարտադրուեցաւ կոռը: Խօսքը տեղ-տեղ տանելի, սովորական պարտադիր աշխատանքի մասին է: Մտրակի հարուածներու տակ կը ստիպէին, որ մարդիկ հարելըաւոր քիլոմետրեր քալելով գինամթերք փոխադրէին իրենց կռնակին վրայ: Միայն Մշոյ դաշտի մէկ ձորին մէջ 3.000 մարդ, գրաստի աշխատանքին լծուած, մեռան անօթութեան, ուժասպառութեան եւ հիւանդութեան պատճառով:

Ե.– Սպանութիւններ.– Ի լրումն դժբախտութեանց, Երիտ. թուրքիոյ հաբեկիչները ձեռնարկեցին սպանութեանը, Հայաստանի տարբեր շրջաններուն մէջ, շարք մը աչքի գարնող անձնաւորութեանց: Յիշենք, այլոց կարգին, երեւելիի մը սպանութիւնը Տիարպեքիբի մէջ. Պայագէտի մէջ դաշնակցական վեթերաններէն [Գալուստ] Ալոյեան Արիստակէս քահանան (Օձնի գիւղ, Կարնոյ դաշտ), որ ազդեցիկ անձնաւորութիւն էր գաւառական բնակչութեան մէջ. Օտապաշեան եպիսկոպոս, որ Կոստանդնուպոլսէն կ'ուղեւորուէր իր պաշտօնատեղին՝ Երզնկա. Սեդրակ Պաստրմաճեան, փոխտնօրէնը էրզրումի Օսմանեան դրամատան հանրային պարտուց վերակացու Խոսրով Պէյլիքճեան, որ իր կնոջ եւ զաւկին հետ խեղդամահ եղաւ Սեւ ծովուն մէջ:

Մեր ընկերներու (այժմ մահացած) նամակներուն, ինչպէս նաեւ վերապրողներու վկայութեանց համաձայն, ահաբեկչական այս արարքներու միջոցաւ Երիտ. թուրքերը կը ձգտէին մղել հայերը ընդդիմութեան, որպէսզի արդարացնեն իրենց ապագայ խստութիւնները:

Պիտի յիշատակենք նոյնպէս երկու միջոցառումներ, որոնք վճռական կարեւորութիւն ունեցան հայոց ճակատագրին համար. քափթիթիւլասիոններու ջնջումը եւ Սրբազան պատերազմի հռչակումը:

Ը.– Եւրոպական պատերազմի սկիզբը (9 Սեպտ. 1914), ծանուցուեցաւ որ 1 Հոկտեմբերէն սկսեալ քափթիթիւլասիոնները պիտի դադրէին ի զօրու ըլլալէ: Հոկտեմբեր 1–ը հռչակուեցաւ եւ Երիտ. թուրքերու կողմէ «տօնուեցաւ իբրեւ Երիտ. թուրքիոյ ազատագրումի օր Եւրոպայի դարաւոր լուծէն»:

Մանօթ է որ քափթիթիւլասիոնները չէին երաշխաւորեր միայն օտար երկիրներու հպատակներուն շահերը՝ որոնք թուրքիոյ մէջ արտերկրային իրաւունքներ կը

